



**ԿԱՐԾԻՔ-ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ  
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ ԱՆ) կողմից 2023 թվականի հուլիսի 13-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am) հրապարակվել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարության նախագիծ) և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի (այսուհետ՝ Գործողությունների ծրագրի նախագիծ) նախագծերը:

Ստորև ներկայացնում ենք Իրավաբանների հայկական ասոցիացիայի (այսուհետ՝ ԻՀԱ), Իրավունքի Եվրոպա միավորման, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կարծիքը-դիտարկումները և առաջարկությունները վերը նշված նախագծերի վերաբերյալ:

Կարծիքում տեղ են գտել նաև 2023 թվականի օգոստոսի 29-ին Իրավաբանների հայկական ասոցիացիայի, Իրավունքի Եվրոպա միավորման, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության, Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի, ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծի հանրային քննարկման<sup>1</sup> ընթացքում ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները:

**I. ԲԱԺԻՆ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅԻՎ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

1) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 1.** Ռազմավարության նախագծի կառուցվածքի Բաժին I-ը նվիրված է հակակոռուպցիոն քաղաքականության ընթացիկ իրավիճակին: Ի հակառակ վերնագրին, բաժնի նախաբանում գնահատված չէ ընթացիկ իրավիճակը, այն օբյեկտիվորեն չի արտացոլում Հայաստանում հակակոռուպցիոն գործողությունների իրական պատկերը և սահմանափակված է դեկլարատիվ բնույթի նախադասություններով: Ռազմավարության տարբեր մասերում նշված են կատարված գործողությունները և ձեռքբերումները, ի հեճուկս սրան, իրական և համակարգային խնդիրները և մարտահրավերները ներկայացված չեն: Մասնավորապես,

<sup>1</sup> <https://armla.am/50866.html>

Ռազմավարության նախագծում անդրադարձ չկա այնպիսի համակարգային խնդիրների, ինչպիսիք են՝

- ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի շուրջ առաջացած խնդիրները, օրինակ՝ ՀՀ սահմանադրական դատարանում քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենսդրական կարգավորումների սահմանադրականության հարցը, այս մասով Սահմանադրական դատարանի դիմումի հիման վրա Վենետիկի հանձնաժողովից ստացված 2022 թվականի դեկտեմբերի 19-ի խորհրդատվական կարծիքը<sup>2</sup>, որից պարզ է դարձել, որ օրենքն ունի լրամշակման կարիք, մասնավորապես, որոշ հարցերում, ինչպես օրինակ՝ ապացուցման բեռի մասով, օրենսդրական կարգավորումներն ունեն որոշակիացման անհրաժեշտություն, այնուհետև՝ ՄԻԵԴ-ի կողմից կայացրած վերջին որոշումները տարբեր երկրների մասով, որոնք կարող են բեկումնային լինել Հայաստանի դատական պրակտիկայի համար: Ընդ որում, բացի ընդհանուր դատողություններից, առկա չէ հստակ կառուցակարգի պատկեր ապօրինի ծագում ունեցող գույքի հետագա ճակատագրի վերաբերյալ, Բացի այդ, պետք է լրջագույն կերպով անդրադարձ կատարվի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով զբաղվող դատավորների, հատկապես՝ Վճռաբեկ դատարանի դատավորների անվտանգության մեխանիզմների բացակայության հարցին,
- բիզնես ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը և վերջին զարգացումների արդյունքում բիզնես միջավայրում ձևավորված վախի մթնոլորտը, այդ կապակցությամբ բիզնեսի հետ նշված խնդիրները լուծելու ուղղությամբ համատեղ ձեռնարկվող գործուն քայլերի շրջանակը,
- կոռուպցիոն հանցագործություններով կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու տարածված պրակտիկան: Ռազմավարության նախագիծը չի լուծում այն խնդիրը, երբ կալանքը պետք է կիրառվի որպես բացառիկ խափանման միջոց, և անձիք ամիսներ շարունակ առանց մեղադրական դատավճռի չմնան կալանքի տակ,
- Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների ձևավորման գործընթացում թույլ տրված իրավական խնդիրները, այդ թվում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների քաղաքական նշանակումները<sup>3</sup>, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնի համար անցկացված մրցույթի շղարշային բնույթը<sup>4</sup>, ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառնությունների ոլորտը համակարգող տեղակալի՝ ոչ մրցակցային պայմաններում մրցույթ անցկացնելու պրակտիկան, երբ

<sup>2</sup> Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումը հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2022\)048-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2022)048-e), պարագրաֆ 61:

<sup>3</sup> <https://armla.am/48780.html> , <https://iravaban.net/420698.html>

<sup>4</sup> <https://iravaban.net/351621.html>

նշանակումը փաստացի անցկացվել է այլընտրանքային թեկնածուի բացակայության պայմաններում<sup>5</sup>,

- կոռուպցիայի ընկալման համաթվի իրական պատկերը: 2019-2022թթ. հակակոռուպցիոն ռազմավարության (այսուհետ՝ նախորդ կամ չորրորդ Ռազմավարություն) շրջանակներում կոռուպցիայի ընկալման համաթիվը 55 միավորի հասցնելու նպատակը ներառվել էր վարչական կոռուպցիան հաղթահարելու համար: Սակայն այս նպատակը նվաճված չէ, և խնդիրը լուծված չէ:

Այս խնդիրների թվարկումն ու ներկայացումը ինքնանպատակ չէ. սրանց վերլուծության, քաղված դասերի հիման վրա պետք է մշակվի Ռազմավարության նախագիծը և սահմանվեն իրատեսական նոր նպատակներ:

2) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 2.** Բացի այդ, Ռազմավարության նախագծի «Հակակոռուպցիոն քաղաքականության ընթացիկ իրավիճակը» բաժնում ներկայացնելով կատարված աշխատանքը կատարողականի գնահատականները, մեթոդապես ճիշտ է ներկայացնել նաև մարտահրավերները ու խնդիրները, որոնք բխում են նախորդ՝ չորրորդ Ռազմավարությունից: Մասնավորապես, այս հատվածում խոսելով ձեռքբերումների մասին, զուգահեռ պետք է շեշտադրվի նաև այն հանգամանքը, որ նախորդ Ռազմավարության կատարողականը չափվել է միայն քանակական ցուցիչների մակարդակով, և որ որակական գնահատում չի կատարվել, այսինքն ազդեցության մակարդակում Ռազմավարության կատարողականը գնահատված չէ: Այս մասով, ԻՀԱ-ն և գործընկերները իրենց ամենաթարմ դիտարկումները ներկայացրել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թթ. գործողությունների ծրագրի 2022 թ.-ին իրականացման ենթակա գործողությունների հասարակական մշտադիտարկման արդյունքների զեկույցի շրջանակներում<sup>6</sup>: Ընդ որում, ԻՀԱ-ն կիսում է նաև ՏՀԶԿ-ը Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի Մոնիթորինգի զեկույցի դեռևս չհրապարակված առաջին և վերանայված՝ երկրորդ նախագծի շրջանակներում չորրորդ Ռազմավարության կատարողականի վերաբերյալ արված դիտարկումները:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.** Վերաշարադրել «Հակակոռուպցիոն քաղաքականության ընթացիկ իրավիճակը» բաժինը՝ դրանում տալով օբյեկտիվ գնահատականներ ընթացիկ իրավիճակի և վերը նշված խնդիրների մասին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.** Չորրորդ Ռազմավարության արդյունքում ունեցած ձեռքբերումների հետ միաժամանակ՝ օբյեկտիվորեն ներկայացնել այն հիմնական մարտահրավերները, խնդիրները և բացթողումները, որոնք ի հայտ են եկել չորրորդ Ռազմավարության կատարման և գնահատման ընթացքում, ինչպես նաև

<sup>5</sup> Տե՛ս Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կռաւիցիայի մշակած ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. գործողությունների ծրագրի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ զեկույցը, <https://armla.am/wp-content/uploads/2021/04/2019-22-ACC-Strategy-Monitoring-Final.pdf>, էջ 76

<sup>6</sup> <https://armla.am/49891.html>

մասնագիտացված ՔՀԿ-ների կողմից կատարված մշտադիտարկումների (բացահայտումների) արդյունքում:

- 3) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 3.** Սույն բաժնում նշված է. «*Հավատարիմ մնալով վերոնշյալ նպատակների իրականացմանը ՀՀ կառավարությունը իր գործունեության 2021-2026թթ. ծրագրի շրջանակներում վճռական է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ անզիջում պայքար մղելու կոռուպցիայի դեմ՝ վերջնականապես արմատախիլ անելու կոռուպցիոն հիմնական դրսևորումները:*» (էջ 3): ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «Կոռուպցիայի դեմ պայքար» բաժնի 5.5 կետում նշված է. «*Կառավարությունը հավատացած է, որ կոռուպցիան շարունակում է մարտահրավեր լինել իրավական, անվտանգ, տնտեսապես զարգացած, ժողովրդավարական պետության կայացման համար: Ուստի Կառավարությունը վճռական է բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ անզիջում պայքար մղելու կոռուպցիայի դեմ՝ վերջնականապես արմատախիլ անելով կոռուպցիոն բոլոր դրսևորումները:*» (էջ 84): Գտնում ենք, որ այս ձևակերպումը ամբողջությամբ չի արտահայտում Կառավարության ծրագրի հիմքում դրված մոտեցումը, և կոռուպցիայի դեմ պայքարը պետք է իրականացնել ոչ թե ըստ դասակարգումների՝ հիմնական դրսևորումների, այլև՝ ամբողջական, համակարգված և փոխկապակցված:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.** Վերաշարադրել Ռազմավարության նախագծի «Հակակոռուպցիոն քաղաքականության ընթացիկ իրավիճակը» բաժնի «վերջնականապես արմատախիլ անելու կոռուպցիոն հիմնական դրսևորումները» ձևակերպումը և տալ Կառավարության 2021-2026թթ. ծրագրին համապատասխան հետևյալ ձևակերպումը. «վերջնականապես արմատախիլ անելու կոռուպցիոն բոլոր դրսևորումները» բառերով:

- 4) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 4.** Այս բաժնում տեղ չի գտել Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծերի մշակման գործընթացը: Մասնավորապես, որ Ռազմավարության և գործողությունների ծրագրի աշխատանքները սկսել են 2023թ.-ի փետրվարի 14-ից՝ ՀՀ ԱՆ-ի 2023թ.-ի փետրվարի 14-ի N 75-Ա հրամանով, որով. ա/ **Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ** և հաստատվել դրա անհատական կազմը՝ համաձայն Հավելվածի, բ/ աշխատանքային խմբի ղեկավարին հանձնարարվել է ապահովել **Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակման աշխատանքների կատարումը:**

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 4.** Բաժինը լրացնել նոր՝ չորրորդ կետով. «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակման գործընթացը» վերնագրով, և դրա ներքո ներկայացնել մշակման գործընթացը, որ սկսվել է 2023թ.-ի փետրվարի 14-ից՝ ՀՀ ԱՆ-ի 2023թ.-ի փետրվարի 14-ի N 75-Ա հրամանով, որով. ա/ **Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ** և հաստատվել դրա

անհատական կազմը՝ համաձայն Հավելվածի, ք/ աշխատանքային խմբի ղեկավարին հանձնարարվել է ապահովել Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակման աշխատանքների կատարումը:

5) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 5.** Բաժին I-ինի «Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանի Հանրապետությունում 2019-2022 թվականներին, առկա մարտահրավերները» ենթաբաժին 1-ում (էջ 3) նշված է. «... Հայաստանի Հանրապետության արդեն իսկ կայացած հակակոռուպցիոն մարմինների ինստիտուցիոնալ համակարգի շարունակական կատարելագործման...»: Գտնում ենք, որ ՀՀ-ում հակակոռուպցիոն համակարգը դեռևս ամբողջապես կայացած չէ, այն ձևավորման փուլում է, և ամբողջապես կայանալու նպատակով ունի շարունակական կատարելագործման կարիք: Հասկապես, նկատի ունենալով Դիտարկում 1-ում նշված հակակոռուպցիոն համակարգի ձևավորման խոցելի գործընթացը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 5.** Կայացած բառը փոխարինել «ձևավորված և գործող» բառերով:

6) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 6.** Բաժին I-ինի «Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի ընկալումը և իրավիճակի գնահատականը» ենթաբաժին 3-ում (էջ 18) գնահատված չէ ընթացիկ իրավիճակը, այն օբյեկտիվորեն չի արտացոլում Հայաստանում հակակոռուպցիոն գործողությունների իրական պատկերը և սահմանափակված է դեկլարատիվ բնույթի նախադասություններով: Դեռ ավելին, նույն հատվածում նշված է. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ որպես հիմքային ցուցիչ նշված էր 2018 թվականի արդյունքը՝ 35 միավոր, ապա ստացվում է՝ Կոռուպցիայի ընկալման համաթվի՝ 2022 թվականի համար ակնկալվող 42,8% բարելավման փոխարեն արձանագրվել է 31,4%, ինչը ևս էական ձեռքբերում է 2018 թվականի համեմատությամբ: Այսինքն, 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումը, ըստ էության, իր դրական արձանագրումն է ստացել նաև հասարակական ընկալման մեջ»: Գտնում ենք, որ նման եզրահանգում կատարելու համար անհրաժեշտ է նախ ունենալ փաստահեն և գիտելիքահեն հարցումներ<sup>7</sup>, գնահատականներ և հանրային կարծիքներ: Բացի այդ, համեմատությունը պետք է լինի ոչ թե 2018 թվականի հիմքային ցուցիչը, այլ՝ չորրորդ Ռազմավարությամբ նախատեսված արդյունքը, այն է՝ 2022 թվականին ունենալ

<sup>7</sup> Տե՛ս օրինակ՝ Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա Լումպուրի սկզբունքները, ըստ որի՝ Հակակոռուպցիոն Ռազմավարության մշակման գործընթացի սկզբունք է՝ *ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻԲԱՅԻՆ ՀԵՆՔ*, որը նշանակում է, որ Ռազմավարությունների մշակումը, իրականացումը և մոնիթորինգը պետք է հիմնվեն հակակոռուպցիոն քաղաքականությունների և հաստատությունների ոլորտում հուսալի ախտորոշման, կարիքների և ռիսկերի, խոցելի շրջանների և բացթողումների մասին վկայության վրա (*SOUND KNOWLEDGE BASE: Development, implementation and monitoring of strategies should be informed by sound diagnostics, needs and evidence of risk and vulnerability areas and gaps in anti-corruption policies and institutions.*): Հասանելի է այստեղ. հայերեն՝ <https://armla.am/wp-content/uploads/2019/01/Kuala-Lumpur-Statement-Arm-1.pdf> անգլերեն՝ <https://armla.am/en/wp-content/uploads/sites/2/2019/01/Kuala-Lumpur-Statement-on-Anti-Corruption-Strategies-Final-21-22-October-2013.pdf>

Կոռուպցիայի ընկալման համաթվի 55 միավոր: Չորրորդ Ռազմավարության կատարման ընթացքում ամենաբարձր համաթիվը, որ ապահովվել է, եղել է 2021 թվականին՝ առաջընթաց 3 միավորով, ստանալով ընդհանուր՝ 49 միավոր: Այս միավորը սակայն 2022 թվականին չի պահպանվել: Դեռ ավելին նվազել է 3-ով, այսպիսով ՀՀ-ի համար ապահովվելով համաթվի 46 միավոր<sup>8</sup>: Հիշյալի կապակցությամբ իր մտահոգությունն է հայտնել նաև ՀՀ վարչապետը՝ Կառավարության նիստում, նշելով, որ անհանգստացնող է ցուցիչի անկումը<sup>9</sup>: Հետևապես, անհասկանալի է, թե ինչպես է ԱՆ-ը ընթացիկ իրավիճակը գնահատել «*դրական արձանագրումն է ստացել նաև հասարակական ընկալման մեջ*»:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 6.** Բաժին I-ինի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ» ենթաբաժին 3-ը վերախմբագրել և ընթացիկ իրավիճակը ներկայացնել Կոռուպցիայի ընկալման համաթվի մակարդակի համատեքստում, այն է՝ նախանշված 55 միավորը և ունեցած 46 միավորը:

**II. ԲԱԺԻՆ II. ՀԱԿԱԿՈՒՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԱԿԱԿՈՒՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

7) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 7.** Սույն բաժնի ներքո ներկայացված են ռազմավարության՝ ըստ հիմնապայմանների նպատակները և դրանց ուղղությունները: Գտնում ենք, որ ռազմավարության մշակման և կառուցվածքի տրամաբանությունը խախտված է: Նախ՝ նախքան հիմնապայմանների առանձին նպատակների և դրանց ուղղությունների ներկայացումը, անհրաժեշտ է ներկայացնել՝ թե որն է այս ռազմավարության տեսլականը՝ ընդհանուր նպատակը, որին ձգտում է հասնել Ռազմավարությունը և Գործողությունների ծրագիրը: Այս տրամաբանությունը եղել է ինչպես նախորդ ռազմավարության<sup>10</sup> հիմքում, այնպես էլ նախատեսված է միջազգային ստանդարտներով<sup>11</sup> և բխում է ՀՀ վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական

<sup>8</sup> <https://www.transparency.org/en/cpi/2022/index/arm>

<sup>9</sup> <https://www.primeminister.am/hy/press-release/item/2023/02/09/Cabinet-meeting/>

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ 2019-2022թթ. Հակակոռուպցիոն ռազմավարություն, Գլուխ 2, Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակը և խնդիրները, 2.1. Հակակոռուպցիոն ռազմավարության հետապնդած առանցքային նպատակները և առաջադրված հիմնական խնդիրները, էջեր 23-26: Հասանելի է այստեղ. [https://www.arlis.am/Annexes/6/2022\\_N1351hav.1.pdf](https://www.arlis.am/Annexes/6/2022_N1351hav.1.pdf)

<sup>11</sup> Տե՛ս օրինակ՝ Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա Լումպուրի սկզբունքները, ըստ որի՝ Հակակոռուպցիոն Ռազմավարության մշակման գործընթացի սկզբունք է՝ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ, որը նշանակում է, որ համաձայնություն պետք է ստեղծվի ռազմավարությունների ընդհանուր տեսլականի և նպատակների շուրջ (COMMON VISION: A consensus should be built around a common vision and intended objectives of strategies.)*: Հասանելի է այստեղ. <https://armla.am/wp-content/uploads/2019/01/Kuala-Lumpur-Statement-Arm-1.pdf> անգլերեն՝ <https://armla.am/en/wp-content/uploads/sites/2/2019/01/Kuala-Lumpur-Statement-on-Anti-Corruption-Strategies-Final-21-22-October-2013.pdf>

փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգը հաստատելու մասին» թիվ N 1508-Լ որոշումից: Առհասարակ, ընդունված է, որ ռազմավարական փաստաթղթերը պետք է ունենան ընդհանուր նպատակ, որից բխում են առանձնահատուկ նպատակները (տվյալ դեպքում դա կլինեն հիմնասյուների նպատակները): Ընդ որում, միայն այն կառուցվածքի դեպքում է հնարավոր ունենալ գնահատման ճիշտ համակարգ և պատկեր:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 7.** Լրացնել Ռազմավարության կառուցվածքը, նախատեսել ռազմավարության ընդհանուր նպատակը, որը այն վերջնական արդյունք է, որին պետք է հասնել Ռազմավարության և Գործողությունների ծրագրի կատարմամբ: Ընդհանուր նպատակից բխեցնել առանձնահատուկ նպատակները՝ (խնդիրները) ըստ հիմնասյուների, որոնք օգնելու են նվաճել ընդհանուր նպատակը:

#### **A. ՆՊԱՏԱԿ 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ**

#### **ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

8) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 8.** Սույն ռազմավարական ուղղության գործողությունների ծրագրի նախագծի «Գնահատել Կորուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարիքներն ու կարողությունները և զարգացնել դրանք» թիվ 1.1. գործողության ելակետային տվյալները խնդրահարույց են: Այսպես.

Որպես ելակետային տվյալ նշված է հետևյալը՝ «ԿԿՀ-ի գործունեության արդյունքները, ազդեցության մակարդակը, ինչպես նաև կարողություններն ու ռեսուրսները չեն գնահատվել, սակայն, ի հեճուկս դրան, ավելացել են հանձնաժողովի լիազորություններն ու գործառույթները: Բացի այդ, առկա է թափուր հաստիքների համալրման խնդիր»: Մինևս ժամանակ, որպես 2026 թվականի արդյունքային ցուցանիշ սահմանված է «ԿԿՀ թափուր հաստիքները համալրվել են առնվազն 80%-ով»: Այս գործողության համատեքստում ենթադրվում է, որ հաստիքների համալրումը և դրանց քանաքական/տոկոսային ցուցանիշները պետք է նախատեսվեն՝ հիմք ընդունվելով կարիքների և կարողությունների գնահատման ցեկույցը, հակառակ պարագայում ստացվում է, որ անկախ զեկույցի արդյունքների՝ արդեն իսկ որոշված է տոկոսային աճի շեմը, ինչի արդյունքում գործողությունը դառնում է ոչ տրամաբանական:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 8.** Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք վերանայել «Գնահատել Կորուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարիքներն ու կարողությունները և զարգացնել դրանք» թիվ 1.1. գործողության ելակետային տվյալները:

#### **ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

9) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 9.** Ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծի «Երաշխավորել իրավական ակտերի

նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը՝ մշակվող ակտերի (ex ante) և անհրաժեշտության դեպքում՝ դրանց հիմքում ընկած կամ դրանց հետ փոխկապակցված իրավական ակտերի (ex post) փորձաքննությունը» թիվ 1.7. գործողության առնչությամբ գտնում ենք, որ ողջունելի է ex ante և ex post փորձաքննությունների տարբերակումը:  
**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 9.** Բացի այդ, առաջարկում ենք նախատեսել նաև հակակոռուպցիոն փորձաքննության ակրեդիտացման համակարգի ներդրումը, որը միջազգային փորձում տեղ գտած պրակտիկա է, որի ժամանակ փորձաքննությունը կարող է պատվիրակվել հակակոռուպցիոն փորձագետներին կամ մասնագիտացված ՔՀԿ-ներին, որոնք պետության կողմից սահմանված կարգով անցել են հատուկ ակրեդիտացիա:

**ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ  
ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՍՐԱՊՆԴՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

10) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 10.** Ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծի «Միասնականացնել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրությունը» թիվ 1.8. գործողության կապակցությամբ գտնում ենք, որ այս ուղղության ներքո ներառված ենթագործողությունները թերի են, քանի որ դրանք վերաբերում են բացառապես կոռուպցիայի կանխարգելմանը, այն ինչ կոռուպցիայի դեմ պայքարի երեք ուղղություններից է հանդիսանում նաև հակակոռուպցիոն կրթությունն ու հանրային իրազեկումը: Այսպես.

Միջազգային փորձի, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» կոնվենցիայի համաձայն՝ հակակոռուպցիոն կրթությունն ու հանրային իրազեկումը իրականացվում է կոռուպցիայի կանխարգելմանը զուգահեռ: Ըստ այդմ, ընդունվող օրենսդրական ակտի շրջանակներում անհրաժեշտ է ներառել նաև հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման օրենսդրական կարգավորումները: Եթե ՀՀ կառավարությունը որոշում է հակակոռուպցիոն կրթության ոչ ֆորմալ բաղադրիչի իրականացման գործառույթները վերապահել ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, ապա այդ գործառույթի փոխանցումը պետք է լինի աստիճանաբար՝ հնարավորինս սահուն, որի պարագայում անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ կատարել նաև կրթության ոլորտի օրենսդրական ակտերի շրջանակներում: Այն դեպքում, երբ ՀՀ կառավարությունը որոշում է հակակոռուպցիոն կրթության ոչ ֆորմալ բաղադրիչի իրականացման գործառույթները վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, այս դեպքում ևս պետք է օրենսդրական փոփոխություններ կատարել նաև կրթության ոլորտի օրենսդրական ակտերի շրջանակներում:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 10.** Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք՝

- «Միասնականացնել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրությունը» թիվ 1.8. գործողության գործողության անվանումը վերաշարադրել «Կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և հանրային



իրազեկման մասին իրավակարգավորումների միասնական ակտի մշակում, հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում» կամ

- նպատակ 3-ի ներքո նախատեսել առանձին գործողություն՝ «Հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման մասին իրավակարգավորումների միասնական ակտի մշակում, հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում»:

11) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 11.** Չնայած վերջին տարիներին, այդ թվում՝ 07.12.2022 թվականին կատարված՝ պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման համակարգի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններին՝ թե՛ գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ նախագծի «**Ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը**» թիվ 1.10 **գործողությամբ** առաջարկվող լուծումներն ղեռնս ամբողջապես չեն բավարարում միջազգային, այդ թվում՝ ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված հայտարարագրման առարկային առնչվող ստանդարտներին: Այսպես.

ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի շահերի բախման և գույքի հայտարարագրման ոլորտի թիվ 2.3.2. հենանիշի առնչությամբ սահմանված ստանդարտները ներառում են, ի թիվս այլոց, օրենսդրությամբ կամ պաշտոնական ուղեցույցներով նախատեսված՝ երկրի ներսում կամ արտերկրում գտնվող անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների և այլ շարժական գույքի հայտարարագրման պահանջ, որի առնչությամբ մոնիթորինգային ուղեցույցը սահմանում է «*օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու պահանջ*»:

Բացի այդ, ՏՀԶԿ շահերի բախման և գույքի հայտարարագրման ոլորտի թիվ 2.3.3. հենանիշի առնչությամբ սահմանված ստանդարտները ներառում են, ի թիվս այլոց, օրենսդրությամբ կամ պաշտոնական ուղեցույցներով նախատեսված՝ հետևյալ կետերի սահմանման և վերջինիս հայտարարագրման պահանջ, որոնց առնչությամբ մոնիթորինգային ուղեցույցը ևս սահմանում է «*օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու պահանջ*»՝

- Ծախսեր, ներառյալ՝ ծախսերի կատարման ամսաթիվը և չափսը (գումարը);
- Հավատարմագրային կառավարման գործունեություն (տրաստ) իրականացնող կազմակերպությունները, որոնց հետ հայտարարատու պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամն ունի ցանկացած բնույթի կապ, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման գործունեություն (տրաստ) իրականացնող կազմակերպության անվանումը և երկիրը, որտեղ վերջինս գտնվում է, կազմակերպության հիմնադրի, հոգաբարձուների և շահառուների նույնականացման տվյալները:

- Վիրտուալ ակտիվները, օրինակ՝ կրիպտոարժույթներ, ներառյալ՝ վիրտուալ ակտիվի տեսակը և անվանումը, համապատասխան միավորների քանակը և ձեռքբերման ամսաթիվը:

Գործող իրավակարգավորումների համաձայն՝

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ մասերի համաձայն՝ պաշտոնատար անձինք գույքի հայտարարագրում հայտարարագրում են անշարժ գույքը, տրանսպորտային միջոցը և չորս միլիոն ՀՀ դրամ (դրան համարժեք արտարժույթ) կամ ավելի բարձր արժեք ունեցող ցանկացած գույք: ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 18.11.2020 թվականին N: 04-Լ որոշմամբ ընդունված «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի լրացման ուղեցույցը» նշում է պարունակում միայն այն մասին, որ օտարերկրյա պետություններում գտնվող գույքի դեպքում ներկայացվում են գույքի նույնականացման համապատասխան տվյալ: Ինչպես տեսնում ենք, ոչ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, ոչ՝ հայտարարագրերի լրացման ուղեցույցով հստակ և միանշանակորեն սահմանված չէ արտերկրում գտնվող տրանսպորտային միջոցների և այլ շարժական գույքի հայտարարագրման պահանջ:
- Ծախսերի հայտարարագրում ներառվում են 2 միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող միանվագ կամ 3 միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող նույն տեսակի ծախսերը: Դրանք ներառում են՝ հանգստի համար կատարված ճանապարհածախսը (ավիատոմս, գնացքի, ավտոբուսի, նավի տոմսեր), կեցության ծախսը, շարժական կամ անշարժ գույքի վարձակալության համար վճարվող վարձավճարը, ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը, գյուղատնտեսական գործունեության իրականացման հետ կապված ծախսերը, վարկի մարմանն ուղղված վճարումները, անշարժ գույքի վերանորոգման համար կատարված ծախսերը: Հայտարարատուն պարտավոր է բացահայտել ծախսի տեսակը, բովանդակությունը, չափը (գումարը) և արժույթը: Մինևույն ժամանակ, հայտարարագրման ենթակա չէ ծախսերի կատարման ամսաթվի մասին տեղեկատվությունը («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, Հոդված 40.1.):
- Շահերի բախման հայտարարագրում ներառվում են տվյալներ միայն պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, Հոդված 42, մաս 3): Մինևույն ժամանակ, անկա չէ հայտարարագրման պարտականություն հավատարմագրային կառավարման գործունեություն իրականացնող կազմակերպությունների սեփականության և նմանատիպ իրավական պայմանավորվածությունների վերաբերյալ: Բացի այդ, գործող իրավակարգավորումները չեն պահանջում հավատարմագրային կառավարման գործունեություն իրականացնող կազմակերպությունների և

հայտարարատու պաշտոնատար անձանց կամ ընտանիքի անդամի միջև առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն:

- Եկամուտների հայտարարագրում ներառվում է տեղեկատվություն տվյալ տարվա սկզբին և վերջում էլեկտրոնային հաշիվներում և կրիպտոարժույթում առկա վիրտուալ ակտիվների տեսակի, ծագման, արժույթի և քանակի մասին, սակայն ձեռքբերման ամսաթիվը չի բացահայտվում:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա ծրագրի նախագծի «Ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը» թիվ 1.10 գործողությունը նվիրված է միայն հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի ընդլայնմանը՝ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարների կողմից տարեկան, ինչպես նաև պաշտոնի ստանձնելու և դադարեցնելու հայտարարագիր ներկայացնելու և հայտարարատու բոլոր պաշտոնների համար շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականության սահմանման ենթագործողությունների տեսքով:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 11.** Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի «Ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը» թիվ 1.10 գործողության շրջանակներում (վերաձևակերպելով այն) կամ առանձին գործողությամբ՝ անդրադարձ կատարել նշյալ խնդիրներին՝ նախատեսելով՝

- արտերկրում գտնվող տրանսպորտային միջոցների և այլ շարժական գույքի հայտարարագրման հստակ և միանշանակորեն պահանջ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով կամ հայտարարագրերի լրացման ուղեցույցով;
- ծախսերի կատարման ամսաթվի և էլեկտրոնային հաշիվներում և կրիպտոարժույթում առկա վիրտուալ ակտիվների ձեռքբերման ամսաթվի հայտարարագրման պահանջ:
- հավատարմագրային կառավարման գործունեություն (տրաստ) իրականացնող կազմակերպությունների և հայտարարատու պաշտոնատար անձանց կամ ընտանիքի անդամի միջև առկա ցանկացած կապի հայտարարագրման պահանջ, ներառյալ՝ կազմակերպությունների սեփականության և նմանատիպ իրավական պայմանավորվածությունների և կապի բնույթի մասին տեղեկատվության հայտարարագրման պահանջ:

**ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

12) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 12.** Չնայած 07.12.2022 թվականին կատարված՝ շահերի բախման սահմանման վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումների կատարելագործմանն ուղղված ուղղված օրենսդրական փոփոխություններին՝ թե՛

գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ նախագծի «Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը» թիվ 1.19 գործողության շրջանակներում առաջարկվող լուծումները դեռևս ամբողջապես չեն բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված «թվացյալ շահերի բախման» թեստին: Այսպես.

Համաձայն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի շահերի բախման և գույքի հայտարարագրման ոլորտի թիվ 2.1.1. հենանիշի՝ շահերի բախմանն առնչվող օրենսդրությունը պետք է ներառի, ի թիվս այլոց, հանրային ծառայողի «թվացյալ շահերի բախման» սահմանումը՝ միջազգային ստանդարտներին համապատասխան: ՏՀԶԿ-ի կողմից մշակված «Հանրային ծառայողների շահերի բախման կառավարման ուղեցույց»-ը «թվացյալ շահերի բախումը» սահմանվում է որպես իրավիճակ, երբ առաջանում է կարծիք, որ պաշտոնատար անձի մասնավոր շահերը կարող են ոչ իրավաչափ կերպով ազդել վերջինիս պարտականությունների իրականացման վրա, սակայն իրականության մեջ դա այդպես չէ:

Մինչդեռ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նման սահմանում տրված չէ, այլ՝ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասն անուղղակի անդրադառնում է թվացյալ շահերի բախման իրավիճակին՝ սահմանելով, որ պաշտոն զբաղեցնող անձի վերադասը կամ անմիջական ղեկավարը գրավոր հայտարարության ուսումնասիրության հիման վրա ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել, ի թիվս այլոց, իրավիճակի լուծմանն ուղղված հետևյալ քայլը՝ շահերի բախման բացակայության դեպքում շարունակել կամ վերսկսել պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումը:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա ծրագրի նախագծի «Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը» թիվ 1.19 գործողության շրջանակներում առաջարկվում է այլ օրենքներում կատարել նոր սահմանումից բխող փոփոխություններ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 12.** Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի «Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը» թիվ 1.19 գործողության շրջանակներում (վերաձևակերպելով այն)՝ անդրադարձ կատարել նշյալ խնդրին՝ նախատեսելով՝ շահերի բախման սահմանման վերանայում՝ թվացյալ շահերի բախումը օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրելու նպատակով:

13) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 13.** Չնայած 07.12.2022 թվականին կատարված՝ պաշտոն զբաղեցնող անձանց, նրանց վերադասերի և անմիջական ղեկավարների, էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների՝ շահերի բախման կանխման և կառավարման դերերի և պարտավորությունների կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններին՝ թե՛ գործող

իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ նախագծի՝ շահերի բախման ինստիտուտին ուղղված միակ «Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը» թիվ 1.19 գործողության շրջանակներում առաջարկվող լուծումները դեռևս ամբողջապես չեն բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված շահերի բախման իրավիճակի լուծման ստանդարտներին: Այսպես.

Համաձայն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի շահերի բախման և գույքի հայտարարագրման ոլորտի թիվ 2.1.2. հենանիշի՝ շահերի բախմանն առնչվող օրենսդրությունը պետք է ներառի, ի թիվս այլոց, հետևյալ դերերն ու պարտականությունները հանրային ծառայողի ad-hoc (իրավիճակային շահերի բախումը) կանխելու և կառավարելու համար՝ պաշտոն զբաղեցնող անձի ղեկավարի (օրինակ՝ պաշտոն զբաղեցնող անձի վերադասի, անմիջական ղեկավարի) և հատուկ մարմինների/միավորների պարտականությունը՝ լուծել հաղորդված կամ այլ միջոցներով հայտնաբերված շահերի բախումը:

Մինևսյն ժամանակ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Պաշտոն զբաղեցնող անձի վերադասը կամ անմիջական ղեկավարը գրավոր հայտարարության ուսումնասիրության հիման վրա ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված հետևյալ քայլերից մեկը կամ մի քանիսը միաժամանակ (...):* Ինչպես տեսնում ենք, պաշտոն զբաղեցնող անձի վերադասի և անմիջական ղեկավարի շահերի բախման կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված քայլեր ձեռնարկելու պարտականությունը նախատեսված է միայն այն դեպքերում, երբ առկա է հանրային ծառայողի կողմից գրավոր հայտարարություն ներկայացնելու պարագայով, և ոչ այն պարագայում, երբ շահերի բախումը հայտնաբերվել է այլ աղբյուրներից:

Բացի այդ, համաձայն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի շահերի բախման ոլորտի թիվ 2.1.3. հենանիշի՝ շահերի բախմանն առնչվող օրենսդրությունը պետք է նախատեսի իրավիճակային (ad hoc) շահերի բախման լուծման հետևյալ մեթոդները՝

- 1) հանրային ծառայողի կողմից ակտիվների հետ կապված շահերից հրաժարում կամ դրանց լուծարում:
- 2) հանրային ծառայողի հրաժարականը շահերի բախման խնդրո առարկա մասնավոր պաշտոնից կամ գործառույթից կամ մասնավոր շահի վերացում այլ եղանակով:
- 3) հանրային ծառայողի՝ շահերի բախման խնդրո առարկա որոշումների կայացման գործընթացում ներգրավման բացառում:
- 4) հանրային ծառայողի՝ շահերի բախման խնդրո առարկային առնչվող որոշակի տեղեկատվության հասանելիության սահմանափակում:

- 5) հանրային ծառայողի տեղափոխությունն այլ՝ շահերի բախման խնդրո առարկային չառնչվող պաշտոնում:
- 6) հանրային ծառայողի պարտականությունների և գործառույթների վերանայում:
- 7) հանրային ծառայողի կողմից պարտականությունների իրականացում արտաքին վերահսկողության ներքո:
- 8) հանրային ծառայողի հրաժարականը/հեռացումը իրենց պետական պաշտոնից:

Մինևույն ժամանակ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Պաշտոն զբաղեցնող անձի վերադասը կամ անմիջական ղեկավարը գրավոր հայտարարության ուսումնասիրության հիման վրա ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված հետևյալ քայլերից մեկը կամ մի քանիսը միաժամանակ.

- 1) սահմանափակել պաշտոն զբաղեցնող անձի հասանելիությունը որոշակի տեղեկատվության,
- 2) տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարել պաշտոն զբաղեցնող այլ անձի, եթե դա օրենքով արգելված չէ,
- 3) պաշտոն զբաղեցնող անձի համաձայնությամբ սահմանել ժամկետ շահերի բախումը վերացնելու համար,
- 4) սահմանափակել տվյալ դեպքում պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները, հայեցողության շրջանակը, եթե դա օրենքով արգելված չէ,
- 5) ձեռնպահ մնալ կոլեգիալ մարմիններում որոշում կայացնելուց, եթե համապատասխան հարաբերությունը կարգավորող օրենքով այլ բան նախատեսված չէ,
- 6) շահերի բախման բացակայության դեպքում շարունակել կամ վերսկսել պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումը»:

Ինչպես տեսնում ենք, նշյալ ցանկում բացակայում է հանրային ծառայողի տեղափոխությունն այլ՝ շահերի բախման խնդրո առարկային չառնչվող պաշտոնի, հանրային ծառայողի կողմից պարտականությունների իրականացումը արտաքին վերահսկողության ներքո և հանրային ծառայողի հրաժարականը/հեռացումը իրենց պետական պաշտոնից նախատեսված չեն: Բացի այդ, պաշտոն զբաղեցնող անձի համաձայնությամբ շահերի բախումը վերացնելու համար ժամկետի սահմանումն առերևույթ ներառում է ՏՀԶԿ վերոնշյալ հենանիշի 1-3 տարրերը, սակայն առկա է լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա ծրագրի նախագծի «Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը» թիվ 1.19 գործողության շրջանակներում առաջարկվում է այլ օրենքներում կատարել նոր սահմանումից բխող փոփոխություններ:

**ԱՌՍԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ 13.** Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը» թիվ 1.19 գործողության շրջանակներում

(վերաձևակերպելով այն) կամ առանձին գործողությամբ՝ անդրադարձ կատարել նշյալ խնդիրներին՝ նախատեսելով՝ պաշտոն զբաղեցնող անձի վերադասի և անմիջական ղեկավարի դերերի և պարտականությունների վերանայում՝

- հանրային ծառայողի կողմից գրավոր հայտարարություն ներկայացնելու աղբյուրներից բացի այլ աղբյուրներով շահերի բախման հայտնաբերման պարագայում պաշտոն զբաղեցնող անձի վերադասի և անմիջական ղեկավարի կողմից շահերի բախման կանխարգելման ու կառավարման պարտականության օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրելու նպատակով:
- պաշտոն զբաղեցնող անձի վերադասի և անմիջական ղեկավարի կողմից հանրային ծառայողին՝ շահերի բախման խնդրո առարկային չառնչվող այլ պաշտոնի տեղափոխելու, արտաքին վերահսկողության ներքո հանրային ծառայողի կողմից պարտականությունների իրականացման և իրենց պետական պաշտոնից հանրային ծառայողի հրաժարականին/հեռացմանն ուղղված քայլեր ձեռնարկելու իրավասություն տրամադրելու և պաշտոն զբաղեցնող անձի համաձայնությամբ շահերի բախումը վերացնելու համար ժամկետի սահմանմանն ուղղված քայլի պարզաբանման նպատակով:

14) ՂԻՏԱՐԿՈՒՄ 14. Թե՛ գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ նախագծի՝ շահերի բախման ինստիտուտին ուղղված միակ «Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը» թիվ 1.19 գործողության շրջանակներում առաջարկվող լուծումները դեռևս ամբողջապես չեն բավարարում միջազգային, մասնավորապես՝ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված՝ շահերի բախման և կարգավորումների խախտմամբ կնքված պայմանագրերն անվավեր ճանաչելու ստանդարտներին: Այսպես.

Համաձայն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի շահերի բախման և գույքի հայտարարագրման ոլորտի թիվ շահերի բախման և գույքի հայտարարագրման ոլորտի թիվ 2.2.3. հենանիշի՝ շահերի բախմանն առնչվող օրենսդրությունը պետք է ներառի, ի թիվս այլոց, շահերի բախման իրավիճակում կամ կարգավորումների խախտմամբ կայացված որոշումների և կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրերը անվավեր ճանաչելուն ուղղված մեխանիզմներ

Մինևսույն ժամանակ, ՀՀ օրենսդրության վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդրությամբ նախատեսված չեն մեխանիզմներ՝ ուղղված շահերի բախման իրավիճակում կամ կարգավորումների խախտմամբ կայացված որոշումների և կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրերը անվավեր ճանաչելուն:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա ծրագրի նախագծի «Երաշխավորել շահերի բախման նոր

սահմանման իրացումը» թիվ 1.19 գործողության շրջանակներում առաջարկվում է այլ օրենքներում կատարել նոր սահմանումից բխող փոփոխություններ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 14.** Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը» թիվ 1.19 գործողության շրջանակներում (վերաձևակերպելով այն) կամ առանձին գործողությամբ՝ անդրադարձ կատարել նշյալ խնդիրներին՝ նախատեսելով՝ շահերի բախման իրավիճակներում կայացված որոշումների և կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրերի անվավեր ճանաչելուն ուղղված մեխանիզմներ:

15) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 15.** Ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծի «Զարգացնել անհամատեղելիության պահանջների բացահայտման և վերահսկողության գործիքները» թիվ 1.21. գործողության կապակցությամբ գտնում ենք, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի բացահայտմանն ու վերահսկողությանն ուղղված առաջարկվող ենթագործողությունները սպառիչ չեն: Այսպես.

Սույն գործողությամբ առաջարկվում է սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգ: Թեև նշյալ գործողության նախատեսումը ողջունելի է, մինչև սույն ժամանակ գտնում ենք, որ հավատարմագրային կառավարման հանձնելու գործող կարգավորումները դեռևս չարունակում են մնալ թերի: Մասնավորապես, օրենքի այն կարգավորումը, որի համաձայն հավատարմագրային կառավարիչներ կարող են լինել ինչպես կազմակերպություններ, այնպես էլ՝ անհատ ձեռնարկատերեր, թեև՝ որոշակի սահմանափակումներով, ենթակա է փոփոխման, քանի որ այն չի բխում բաժնեմասնակցությունը մասնագիտացված հավատարմագրային կառավարման ընկերություններին հանձնելու պահանջի էությունից և օրենսդրական արգելքը շրջանցելու հնարավորություն է տալիս: Բացի այդ, ռազմավարությամբ և գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ սույն գործողությամբ չի խոսվում վերջինիս վիճակագրության վարման և դրա հրապարակայնացման մասին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 15.** Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Զարգացնել անհամատեղելիության պահանջների բացահայտման և վերահսկողության գործիքները» թիվ 1.21. գործողության շրջանակներում նախատեսել՝

- բաժնեմասնակցությունը մասնագիտացված հավատարմագրային կառավարման ընկերություններին հանձնելու պահանջի իրացման ավելի տեղայնացված և հասցեական լուծումներ՝ վերանայելով անհատ ձեռնարկատերերի կողմից հավատարմագրային կառավարման իրականացման հնարավորությունը և



դիտարկելով «Հավատարմագրային կառավարման ընկերությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման նպատակահարմարության հարցը:

- հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգի կապակցությամբ նախատեսված վիճակագրության վարմանը և հրապարակայնացմանն ուղղված իրավանորմեր:

16) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 16.** Թե՛ գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ նախագծի այլ սահմանափակումներին ուղղված՝ «Օրենսդրությամբ հստակեցնել «այլ սահմանափակումների» պահանջները» թիվ 1.22 գործողության շրջանակներում առաջարկվող լուծումները դեռևս ամբողջապես չեն բավարարում միջազգային, մասնավորապես՝ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված՝ հետաշխատանքային սահմանափակումների կարգավորումների խախտմամբ կնքված պայմանագրերն անվավեր ճանաչելու ստանդարտներին: Այսպես.

Համաձայն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի շահերի բախման և գույքի հայտարարագրման ոլորտի թիվ 2.2.3. հենանիշի՝ հետաշխատանքային սահմանափակումներին առնչվող օրենսդրությունը պետք է ներառի, ի թիվս այլոց, հետաշխատանքային սահմանափակումների խախտմամբ կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրերը անվավեր ճանաչելու ուղղված մեխանիզմներ

Մինևսյն ժամանակ, ՀՀ օրենսդրության վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդրությամբ նախատեսված չեն մեխանիզմներ՝ ուղղված հետաշխատանքային սահմանափակումների խախտմամբ կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրերը անվավեր ճանաչելուն:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա ծրագրի նախագծի «Օրենսդրությամբ հստակեցնել «այլ սահմանափակումների» պահանջները» թիվ 1.22 գործողության շրջանակներում առաջարկվում է հստակեցնել և մանրամասն կարգավորել այլ սահմանափակումները հանրային ծառայության առանձին ոլորտներում:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 16.** Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Օրենսդրությամբ հստակեցնել «այլ սահմանափակումների» պահանջները» թիվ 1.22 գործողությունների շրջանակներում (վերաձևակերպելով այն) կամ առանձին գործողությամբ անդրադարձ կատարել նշյալ խնդիրներին՝ նախատեսելով՝ հետաշխատանքային սահմանափակումների խախտմամբ կնքված աշխատանքային կամ այլ պայմանագրերի անվավեր ճանաչելուն ուղղված մեխանիզմներ:

17) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 17.** Չնայած 07.12.2022 թվականին կատարված՝ բարեվարքության համակարգի տարրերից իրավիճակային շահերի բախման և նվերների քննունման սահմանափակումներին առնչվող իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվության միջոցների կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններին՝ թե՛ բարեվարքության համակարգի տարրերի (իրավիճակային շահերի բախման, նվերների քննունման սահմանափակումների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների) գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ նախագծի **«Ներդնել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ» թիվ 1.25 գործողության** և **«Որոշակի պաշտոններ զբաղեցնող անձանց համար սահմանել պատասխանատվության միջոցների կիրառման պարտադիր պահանջ» թիվ 1.26 գործողության** շրջանակներում առաջարկվող լուծումները դեռևս ամբողջապես չեն բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված պատասխանատվության պահանջներին: Այսպես.

ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի շահերի բախման և գույքի հայտարարագրման ոլորտի թիվ 2.2.1. և 2.2.2. հենանիշի առնչությամբ սահմանված ստանդարտները ներառում են օրենսդրական սանկցիաների կանոնավոր կիրառում՝ հանրային ծառայողների կողմից իրավիճակային շահերի բախման կանխարգելման և լուծման մասին օրենսդրության խախտման համար:

Մոնիթորինգային ուղեցույցը «իրավիճակային շահերի բախման կանխարգելման և լուծման մասին օրենսդրության խախտում» եզրույթը մեկնաբանում է լայն իմաստով, որը կարող է ներառել իրավիճակային շահերի բախմանն առնչվող գործող իրավակարգավորումների ցանկացած խախտում, օրինակ՝ շահերի բախման մասին չհայտնելը, շահերի բախման իրավիճակը չլուծելը այն վերադաս կամ այլ հանրային ծառայողի կողմից, որին վերապահված է նման լիազորություն, վերադաս կամ այլ հանրային ծառայողի կամ հակակոռուպցիոն մարմնի կողմից հանրային ծառայողին՝ շահերի բախման իրավիճակի լուծման վերաբերյալ հրահանգները չիրականացնելը և այլն:

Բացի այդ, մոնիթորինգային ուղեցույցը օրենսդրական սանկցիաների կանոնավոր կիրառման մասին հենանիշի նախատեսման վերաբերյալ մեկնաբանում է, որ ենթադրվում է, որ համապատասխան սանկցիաներ նախատեսող դրույթները նախատեսված են ազգային օրենսդրությամբ, քանի որ վերջիններս կարևորվում են շահերի բախման կիրառման արդյունավետ համակարգի համար:

Եվրոպայի Խորհրդի «Հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթի հավելված 2-ի 28-րդ հոդվածի 4-րդ կետով ևս սահմանված է պատասխանատվություն՝ այլ հանրային պաշտոնյաներին և ծառայողներին վերահսկող կամ ղեկավարող հանրային պաշտոնյայի համար:

Միննույն ժամանակ, բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ գործող իրավակարգավորումների խախտման համար պատասխանատվության վերաբերյալ դրույթները (իրավիճակային շահերի բխում՝ կարգապահական կամ վարչական պատասխանատվություն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (Հոդված 33.10), օրինակ՝ վարչական պատասխանատվություն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք» (Հոդված 169<sup>31</sup>); նվերներ ընդունելու սահմանափակումներ՝ վարչական պատասխանատվություն՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք» (Հոդված 166<sup>1</sup>); անհամատեղելիության պահանջներ՝ կարգապահական պատասխանատվություն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (Հոդված 31.17); այլ սահմանափակումներ՝ կարգապահական պատասխանատվություն՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (Հոդված 32.3)) սահմանում են պատասխանատվության միջոցներ միայն հանրային ծառայողների կողմից իրականացված հանրային ծառայողների կողմից բարեվարքության համակարգի տարրերին առնչվող իրենց պարտականությունների խախտումների համար և չեն սահմանում պատասխանատվության միջոցներ՝ այլ հանրային ծառայողների վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ բարեվարքության պահպանման հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց կողմից բարեվարքության համակարգի տարրերի պահպանման կանոնների խախտումներին առնչվող իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:

Բացի այդ, միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ բարեվարքության համակարգի տարրերին առնչվող խախտումների համար կիրառվում են ինչպես կարգապահական, այնպես էլ՝ վարչական պատասխանատվության հստակ միջոցներ, միննույն ժամանակ կարգապահական պատասխանատվության միջոցները հստակ սահմանված են օրենսդրությամբ և մեծամասամբ նյութական բնույթի են: Մինչդեռ, գործող իրավակարգավորումների համաձայն մեծամասնությամբ վարչական պատասխանատվություն սահմանված չէ, մի շարք իրավախախտումների առնչությամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները հստակ սահմանված չեն, օրինակ՝ հանրային ծառայողների այլ սահմանափակումների ղեկավար, իսկ սահմանված պատասխանատվության միջոցները հիմնականում ոչ նյութական բնույթի են, օրինակ՝ նախազգուշացում, նկատողություն:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա ծրագրի նախագծի «Ներդնել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ» թիվ 1.25 գործողությունը նվիրված է ոլորտային այլ հիմնախնդրի, այն է՝ միասնական մեխանիզմների ներդրմանը՝ ուղղված բարեվարքության համակարգի տարրերի նույն տեսակի խախտման համար տարբեր մարմինների կողմից կիրառվող պատասխանատվության միջոցների և հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների տարբերակված բնույթին, իսկ «Որոշակի պաշտոններ զբաղեցնող անձանց

համար սահմանել պատասխանատվության միջոցների կիրառման պարտադիր պահանջ» թիվ 1.26 գործողությունը՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ քաղաքական, վարչական և հայեցողական խմբի պաշտոնատար անձանց համար, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով (համայնքային, դիվանագիտական, ոստիկանական, զինվորական, ազգային անվտանգության մարմիններում ծառայությունների մասին) պատասխանատվության միջոցների կիրառման պարտադիր պահանջի բացակայությանը: Ինչպես տեսնում ենք, ռազմավարության նախագծում ոլորտային հիմնախնդիրների և գործողությունների ծրագրի նախագծում գործողությունների շարքում անդրադարձ չի կատարվում այլ հանրային ծառայողներին վերահսկող կամ ղեկավարող հանրային ծառայողների կողմից իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար պատասխանատվության միջոցների կիրառման պարտադիր պահանջի բացակայությանը, մի շարք իրավախախտումների առնչությամբ կարգապահական պատասխանատվություն սահմանված լինելու դեպքում՝ կիրառվող կարգապահական պատասխանատվության հստակ միջոցի բացակայությանը, սահմանված պատասխանատվության միջոցների մեծամասնության ոչ նյութական բնույթին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 17.** Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Ներդնել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ» թիվ 1.25 գործողության շրջանակներում կամ առանձին գործողությամբ՝ անդրադարձ կատարել նշյալ խնդիրներին՝ նախատեսելով՝

- պատասխանատվության միջոցների սահմանում՝ այլ հանրային ծառայողներին վերահսկող կամ ղեկավարող հանրային ծառայողների կողմից, այդ թվում՝ վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող, ինչպես նաև առհասարակ բարեվարքության պահպանման հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց կողմից՝ այլ հանրային ծառայողների կողմից բարեվարքության համակարգի տարրերի՝ իրավիճակային շահերի բախման, նվերների քննումման սահմանափակումների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանման կանոնների խախտումներին առնչվող իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար,
- մի շարք իրավախախտումների առնչությամբ կարգապահական պատասխանատվություն սահմանված լինելու դեպքում՝ կիրառվող կարգապահական պատասխանատվության հստակ միջոցի սահմանում,
- միասնական մոտեցման շրջանակներում նյութական բնույթի վարչական պատասխանատվության միջոցների սահմանում:

18) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 18.** Գործողությունների ծրագրի նախագծի «Իրականացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության համար հաշվետվողականության միասնական մեխանիզմների ներդրմանն ուղղված քայլեր» թիվ 1.27. գործողության կապակցությամբ գտնում ենք, որ նշյալ գործողությունը,

վերջինիս էլակետային տվյալները և կատարողականի թիրախները բավականաչափ հստակ չեն: Բացի այդ, ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության նշյալին անդրադարձ չի կատարվում: Կարծում ենք, որ վերջինս, քստ էության, հանդիսանում է «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ ներդնելուն ուղղված քայլերի իրականացում» թիվ 1.19 գործողության բաղկացուցիչ:

Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ թիվ 1.27 գործողության էլակետային տվյալն է՝ «Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության համար հաշվետվողականության կառուցակարգերը բացակայում են», իսկ ռազմավարությամբ թիվ 1.19 գործողության կապակցությամբ սահմանված է՝ «(...) վարչական կոռուպցիայի հաղթահարման, հանրային կառավարման մարմիններում և ոլորտներում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության բարձրացման, օրինականության ապահովման կոռուպցիոն ռիսկերի ու ռիսկեր ծնող գործոնների չեզոքացման համար առանցքային նշանակություն ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի ներդրումը»:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 18.** Էլնելով վերոգրյալից՝ առաջարկվում է գործողությունների ծրագրի նախագիծը չձանրաբեռնելու նպատակով նախագծից հանել «Իրականացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության համար հաշվետվողականության միասնական մեխանիզմների ներդրմանն ուղղված քայլեր» թիվ 1.27. գործողությունը և այն դիտարկել «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ ներդնելուն ուղղված քայլերի իրականացում» թիվ 1.19 գործողության շրջանակներում՝ նախատեսելով ավելի հստակ ցուցիչներ:

19) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 19.** Ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության ներքո նշված է հետևյալը՝ «Միաժամանակ, բարեվարքության համակարգի զարգացումը պահանջում է պետական և համայնքային մասնակցությամբ ոչ առևտրային կազմակերպություններում բարեվարքության համակարգի ներդրում և զարգացում»: Մինևույն ժամանակ, գործողությունների ծրագրի նախագծի համապատասխան բաժնում նշյալին անդրադարձ չի կատարվում, այլ՝ ծրագրի «Գործարար բարեվարքություն, գործարար իրավունքների պաշտպանություն և պետություն-գործարար վարչարարության դյուրացում» նպատակի ներքո նախատեսված է «Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգեր» թիվ 4.3 գործողությունը, որը չի տարբերակում առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջև:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 19.** Առաջարկվում ենք, կառուցվածքային առանձնահատկությունները պահպանելու նպատակով, «Բարեվարքության համակարգի շարունակական կատարելագործում» բաժնում ևս նախատեսել «Պետական և համայնքային մասնակցությամբ ոչ առևտրային

կազմակերպություններում ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգեր», որն իր մեջ կներառի նաև բարեվարքության բաղադրիչ:

20) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 20.** Թե՛ ռազմավարության, թե՛ գործողությունների ծրագրերի նախագծերի «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ» բաժնի ներքո նախատեսված չէ քաղաքացիական հասարակության մասնագիտացված կառույցներին հանրային կոռուպցիայի կանխարգելման գործառույթների մրցակցային պատվիրակման կառուցակարգերի սահմանմանն ու իրականացմանն ուղղված գործողություն՝ չնայած ռազմավարության կառուցվածքի ծրագրի քննարկումների քննաքննում ձեռք բերված բանավոր համաձայնությունների: Այսպես.

Ի տարբերություն նախորդ ռազմավարության և գործողությունների ծրագրի, սույն ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով չի նախատեսվում ունենալ կոռուպցիայի դեմ ինստիտուցիոնալ կառուցակարգերին ուղղված առանձին նպատակ, որի ներքո էլ սահմանված էր ՔՀԿ-ների կարողությունների զարգացումը: Հետևաբար, սույն ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծում ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի կարողությունների զարգացման ուղղված գործողություններն անհրաժեշտ է իրականացնել՝ ըստ նպատակների: Այդ կապակցությամբ, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկմանն ուղղված 4-րդ նպատակի ներքո գործողությունների ծրագրի նախագծով նախատեսված է «Հզորացնել ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի կարողությունները՝ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և գնահատման նպատակով» թիվ 3.14 գործողությունը: Նշյալ գործողության համատեքստում կիրառվում է «ՔՀԿ-ների մասնակցային մեխանիզմներ» եզրույթը: Գտնում ենք, որ թե նշյալ, թե սույն նպատակի ներքո անհրաժեշտ է կիրառել «ՔՀԿ-ների մասնակցային մեխանիզմներ, այդ թվում՝ մրցակցային պատվիրակման կառուցակարգեր» եզրույթը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 20.** Ելնելով վերագրյալից՝ առաջարկվում է ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծի՝

- «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ» բաժնի ներքո նախատեսել գործողություն հետևյալ խմբագրությամբ՝ «Հզորացնել ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի կարողությունները և սահմանել մասնակցային մեխանիզմներ, այդ թվում՝ գործառույթների մրցակցային պատվիրակման կառուցակարգեր հանրային կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և գնահատման նպատակով»:
- Համանման գործողություն նախատեսել մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակի ներքո:
- Վերախմբագրել հակակոռուպցիոն կրթության նպատակի ներքո շարադրված վերոնշյալ ձևակերպումը:

**B. ԼՊԱՏԱԿ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԳՐՈՒՄ**

**ԱԶԳԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԱՐԻԱԿԱՆԱՑՈՒՄ**

21) Դիտարկում 21. Չնայած 07.12.2022 թվականին կատարված՝ Մարդու իրավունքների պաշտպանին (այսուհետ՝ ՄԻՊ) ազդարարների պաշտպանության իրականացմանը հետևելու և ազդարարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունների վերապահմանն ուղղված օրենսդրական փոփոխություններին՝ թե՛ ՄԻՊ գործիքակազմի գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծով ազդարարման համակարգին ուղղված բոլոր գործողություններով, այդ թվում՝ **«Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության** շրջանակներում առաջարկվող լուծումները չեն բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված **«Ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու մարմին»** թեստին: Այսպես.

Համաձայն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 3.1. հենանիշի՝ *«Առկա է ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու գործակալություն, ստորաբաժանում կամ մասնագիտացված աշխատակազմ»*, որը մոնիթորինգային ուղեցույցի համաձայն մեկնաբանվում է որպես *«գործակալություն, ստորաբաժանում կամ մասնագիտացված աշխատակազմ, որն իրականացնում է բացառապես որոշակի գործառնություններ) և չի կատարում այլ պարտականություններ»*: Մինչդեռ, ՄԻՊ-ն իրականացնում է այլ գործառնություններ և ՄԻՊ-ում առկա չէ ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու ստորաբաժանում կամ մասնագիտացված աշխատակազմ:

Բացի այդ, ըստ ՏՀԶԿ վերոնշյալ մոնիթորինգի ազդարարման ոլորտի թիվ 3.2. հենանիշի, ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու գործակալության ստորաբաժանման կամ աշխատակազմի հիմնական լիազորությունները ներառում են *«ազդարարների դեմ հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) դեպքերի վերաբերյալ բողոքների ստացում և քննություն»*, որի առնչությամբ մոնիթորինգային ուղեցույցը սահմանում է *«օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու պահանջ»*: Մինչդեռ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի՝ բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում Պաշտպանի իրավասությունները սահմանող 24-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետն, այն է՝ *«լիազորված է դիմելու իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պաշտոնատար անձին կամ կազմակերպություն՝ առաջարկելով ձեռնարկել ազդարարի խախտված իրավունքների պաշտպանության և վերականգնմանն ուղղությամբ միջոցառումներ»*, օգտագործում է ընդհանրական ձևակերպում, որը չի

համապատասխանում վերոնշյալ «*օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու*» թեստին:

3.2. հենանիշը սահմանում է նաև ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու գործակալության ստորաբաժանման կամ աշխատակազմի հետևյալ հիմնական լիազորությունը՝ «*արտաքին և ներքին ազդարարման եղանակներով ներկայացված ազդարարումներին պատշաճ ընթացք չտալու դեպքերի, ինչպես նաև ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների խախտումների վերաբերյալ բողոքների ստացում և գործողությունների ձեռնարկում*»: Մոնիթորինգային ուղեցույցը «գործողությունների ձեռնարկում» եզրույթը մեկնաբանում է որպես «պատասխանատու մարմնի կողմից առնվազն առաջարկություններ կամ հրամաններ տալը համապատասխան մարմիններին՝ վերջ դնելու ազդարարների պաշտպանության օրենսդրության խախտումներին», որի կապակցությամբ կրկին սահմանվում է «*օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու*» պահանջ: Մինչդեռ, «ՄԻՊ-ի մասին» օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «*Պաշտպանն ազդարարների պաշտպանության ոլորտում (...) հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը*», իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «*Պաշտպանն ազդարարների պաշտպանության իրականացման նպատակով իրավասու է՝ հետևելու պաշտպանական և վերականգնողական միջոցառումների իրականացմանը*»: Ինչպես տեսնում ենք, այս պարագայում ևս օրենքում տեղ են գտել ընդհանրական ձևակերպումներ, որի արդյունքում հասկանալի չէ, արդյոք սա վերահսկիչ լիազորություն է, թե վերջինս վերաբերում է միայն տեղեկատվության հավաքագրմանը և թույլ չի տալիս արձագանքել օրենսդրական պահանջների խախտումների դեպքերին:

Ազդարարների պաշտպանության ուղղված ՀՀ օրենսդրության համապատասխանությունը ՏՀԶԿ մոնիթորինգի վերոնշյալ՝ 3.2. հենանիշին հատկապես կարևորվում է ազդարարման ոլորտի թիվ 3.3. հենանիշի համապատասխանության քննարկման համատեքստում: Վերջինս սահմանում է, որ ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու մարմնի լիազորությունը՝ «*կիրառել պատասխանատվության միջոցներ կամ ազդարարների՝ հաշվեհարդարից (վնասակար գործողություններից) պաշտպանության այլ միջոցներ կամ նախաձեռնել դրանց կիրառումը*», որը մոնիթորինգային ուղեցույցի համաձայն մեկնաբանվում է որպես «*մարմնի կողմից պատասխանատվության միջոցի կիրառում կամ դատական գործընթացի նախաձեռնում կամ այլ իրավասու մարմնի կողմից պատասխանատվության միջոցի կիրառման պահանջ*», որի կապակցությամբ կրկին սահմանվում է «*օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու*» պահանջ: Մինչդեռ, «ՄԻՊ-ի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 5-րդ մասի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Պաշտպանը բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ սկսված քննարկման արդյունքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնատար անձի կամ կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ



ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքում ընդունում է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում, և օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, կարող է պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկել պատասխանատվության ենթարկել պաշտոնատար այն անձին, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները, իսկ պատասխանատվության ենթարկելու առաջարկով դիմել իրավասու վարչական մարմիններին՝ Կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքում: Ինչպես տեսնում ենք, իրավախախտին պատասխանատվության ենթարկելու հարցում ՄԻՊ գործիքակազմը սահմանափակվում է առաջարկի ներկայացմամբ, որը չի համապատասխանում ՏՀԶԿ նվազագույն ստանդարտին, այն է՝ պատասխանատվության ենթարկելու պահանջի ներկայացմանը: Նմանապես, «ՄԻՊ-ի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված Պաշտպանի՝ իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պաշտոնատար անձին կամ կազմակերպությանը դիմելու՝ ազդարարի խախտված իրավունքների պաշտպանության և վերականգնման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու առաջարկով դիմելու իրավասությունը ևս չի կարող որակվել որպես «*պատասխանատվության միջոցների կամ ազդարարների՝ հաշվեհարդարից (վնասակար գործողություններից) պաշտպանության այլ միջոցների կիրառում կամ նախաձեռնում*»:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա Ռազմավարության նախագծում արձանագրվել է, որ չնայած «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխություններին, հստակ չեն իրավասու մարմինները դերերը, դրանց բաշխումը: Բացի այդ, որպես ազդարարման համակարգի խնդիր է սահմանվել նաև ազդարարման հարցերով պատասխանատուների վերապատրաստման, մասնագիտական աճի հարցերով վերապատրաստում իրականացնող պատասխանատու կառույցների բացակայությունը: Այդ համատեքստում, ծրագրի նախագծի «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության ներքո առաջարկվում է հստակեցնել ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերը և ապահովել ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական գործունեության համակարգումը և նրանց վերապատրաստման կազմակերպումը՝ ճանաչելով ՀՀ արդարադատության նախարարությանը որպես լիազոր մարմին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 21.** Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ռազմավարության նախագիծը պետք է արտացոլի նաև վերոնշյալ խնդիրները և դրանց լուծմանն անդրադառնա նաև գործողությունների ծրագրում՝ դիտարկելով առանձին գործողության նախատեսումը, այն է՝

- ՄԻՊ-ին տրամադրած ազդարարների պաշտպանությունն ապահովելու գործիքակազմը չի բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ՝ «Ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու

մարմնի» ստանդարտներին, մասնավորապես՝ գործող իրավական և կազմակերպական կառուցակարգերի համաձայն՝

- ՄԻՊ գրասենյակում առկա չէ ստորաբաժանում կամ մասնագիտացված աշխատակազմ, որն իրականացնում է բացառապես ազդարարների պաշտպանությանն ուղղված գործառույթ(ներ) և չի կատարում այլ պարտականություններ,
  - օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված չեն վերջինիս կողմից՝ ազդարարների դեմ հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) դեպքերի վերաբերյալ բողոքների ստացման և քննության, ինչպես նաև արտաքին և ներքին ազդարարման եղանակներով ներկայացված ազդարարումներին պատշաճ ընթացք չտալու դեպքերի և ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների խախտումների նկատմամբ վերջինիս վերահսկիչ գործառույթը,
  - վերջինս իրավասու չէ կիրառել պատասխանատվության միջոցներ կամ ազդարարների՝ հաշվեհարդարից (վնասակար գործողություններից) պաշտպանության այլ միջոցներ կամ նախաձեռնել դրանց կիրառումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնատար անձի կամ կազմակերպության կողմից խախտում հայտնաբերելու դեպքում:
- Ելնելով այն հանգամանքից, որ, մի կողմից, ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու մարմինը, տվյալ դեպքում՝ ՄԻՊ-ը, իրականացնելու է ներքին և արտաքին ազդարարմամբ ստացված ազդարարումներին պատշաճ ընթացք տալու և ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների նկատմամբ վերահսկողություն, այսինքն՝ այդ թվում նաև ազդարարման հարցերով պատասխանատուների գործունեության նկատմամբ, իսկ, մյուս կողմից, անհրաժեշտ է ապահովել ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական գործունեության համակարգումը, որը, Ռազմավարության նախագծով, առաջարկվում է իրականացնել ՀՀ արդարադատության նախարարության կողմից, հաշվի առնելով սույն գործառույթների փոխկապակցված բնույթը և Ռազմավարության նախագծով սահմանված՝ ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերի հստակեցմանն ուղղված ենթագործողությունը, գտնում ենք, որ անհրաժեշտ է քննարկել դրանց՝ տարբեր մարմինների կողմից իրականացման նպատակահարմարության հարցը: Գտնում ենք, որ այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել հավելյալ վերլուծություններ և միջազգային փորձի ուսումնասիրություն՝ քննարկելով նաև այնպիսի համապարփակ մոդել, երբ ազդարարման համակարգի համար պատասխանատու լիազոր մարմնի գործունեությունը կներառի թե՛ ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական գործունեության համակարգման, թե՛ վերջիններիս գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման գործուն մեխանիզմներ:

22) **ՂԻՏԱՐԿՈՒՄ 22.** Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի նախագծի **«Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության» գործողության** կապակցությամբ գտնում ենք, որ **արտաքին ազդարարման** ուղղված առաջարկվող ենթագործողությունները սպառիչ չեն: Այսպես.

Գործող օրենսդրական կարգավորումների շրջանակներում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրավասու չէ ընթացք տալ «EmployeeProtect» աշխատողների իրավունքների պաշտպանության հարթակով ստացված անանուն ազդարարումներին, ինչը խաթարում է ազդարարման սկզբունքի էությունը և հնարավորություն չի տալիս պատշաճ կերպով իրականացնել աշխատողների իրավունքների պաշտպանություն: Սույն խնդրի մասին բարձրաձայնել է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը՝ Ազդարարման բազմաշահառու աշխատանքային հարթակի՝ 31.08.2023թ.-ին տեղի ունեցած 1-ին առցանց նիստի ընթացքում:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա Ռազմավարության նախագծում սույն ռազմավարական ուղղության ներքո արձանագրվել է, որ տարբեր տեսակների՝ մասնավորապես արտաքին ազդարարման գործնական արդյունավետ կիրառումը ապահովված չէ, ինչպես նաև՝ ազդարարման համակարգի գործարկումից մինչ օրս պետական մարմիններում գրանցվել է արտաքին ազդարարման 73 դեպք: Այդ համատեքստում, ծրագրի նախագծի «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության ներքո արտաքին ազդարարման կապակցությամբ առաջարկվում է վերանայել ազդարարման համակարգի ներկա մոդելը: Ինչպես տեսնում ենք, թե՛ ռազմավարության, թե՛ գործողությունների ծրագրի նախագծով չի խոսվում արտաքին ազդարարման վերոնշյալ խնդրի մասին:

**ԱՌՍՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 22.** Այդ նպատակով, առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության շրջանակներում անդրադարձ կատարել նշյալ խնդրին՝ նախատեսելով՝

- Օրենսդրական կարգավիճակի տրամադրում այրնտրանքային էլեկտրոնային ազդարարման հարթակներին, որոնք գործում են ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (օրինակ՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից գործարկվող «EmployeeProtect» հարթակ), այնպես էլ՝ կազմակերպությունների կողմից (օրինակ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործարկվող «Բիզպաշտպան» հարթակ),
- «EmployeeProtect» և այլ ազդարարման հարթակներով անանուն ազդարարումներին ընթացք տալու օրենսդրական խոչընդոտների վերացում:

23) **ՂԻՏԱՐԿՈՒՄ 23.** Չնայած 07.12.2022 թվականին կատարված՝ հանրությանն ազդարարելու ինստիտուտի ներդրմանն ուղղված օրենսդրական փոփոխություններին՝

թե՛ գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծի «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության շրջանակներում առաջարկվող լուծումները չեն բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված «Հանրությանն ազդարարելու» արդյունավետության թեստին: Այսպես.

Համաձայն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 2.1. հենանիշի՝ օրենքով պետք է նախատեսված լինի և գործնականում կիրառվի հանրային ազդարարման հնարավորություն: Մոնիթորինգային ուղեցույցը «ազդարարում հանրությանը» եզրույթը մեկնաբանում է որպես ազդարարում ԶԼՄ-ներին, սոցիալական մեդիայում կամ այլ հարթակներում՝ հետևյալ նախապայմանների պահպանմամբ. երբ ազդարարման այլ տեսակներով ներկայացված ազդարարումը ընթացք չի ստացել, կամ երբ կոռուպցիոն հակաօրինական արարքը անմիջական կամ ակնհայտ վտանգ է ներկայացնում հանրության համար, կամ երբ առկա է հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) վտանգ կամ խախտումը վերացնելու ցածր հավանականություն արտաքին ազդարարման տեսակներով ազդարարելու դեպքում: Մինչդեռ, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 9.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Եթե ազդարարման մյուս տեսակներով հաղորդումը օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել, ապա ազդարարը կարող է հաղորդումը հայտնի դարձնել հանրությանը զանգվածային լրատվության միջոցներով»:*

Ինչպես տեսնում ենք, հանրությանն ազդարարել նախքան ներքին և արտաքին ազդարարման տեսակներով ազդարարելը չի թույլատրվում, ներառյալ՝ ՏՀԶԿ ստանդարտներով նախատեսված այն դեպքերում, երբ կոռուպցիոն հակաօրինական արարքը անմիջական կամ ակնհայտ վտանգ է ներկայացնում հանրության համար, կամ երբ առկա է հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) վտանգ կամ խախտումը վերացնելու ցածր հավանականություն ազդարարման այլ տեսակներով ազդարարելու դեպքում:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա Ռազմավարության նախագծում արձանագրվել է հանրության ազդարարման կառուցակարգի ներդրման մասին՝ որպես բարեփոխում, սակայն թե՛ ռազմավարության, թե՛ գործողությունների ծրագրի նախագծի որևէ այդ թվում՝ ամենից վերաբերելի՝ «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողությամբ չի խոսվում հանրության ազդարարման վերոնշյալ խնդրի մասին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 23.** Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության շրջանակներում անդրադարձ կատարել վերոնշյալ խնդրին՝ նախատեսելով

հետևյալը՝ վերանայել հանրությանն ազդարարելուն ուղղված գործող իրավակարգավորումները և համապատասխանեցնել միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ ստանդարտներին՝ նախատեսելով առանց ներքին և/կամ արտաքին ազդարարման տեսակները սպառելու հանրությանն ազդարարելու հնարավորություն այն դեպքերում, երբ կոռուպցիոն հակաօրինական արարքը անմիջական կամ ակնհայտ վտանգ է ներկայացնում հանրության համար, կամ երբ առկա է հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) վտանգ կամ խախտումը վերացնելու ցածր հավանականություն ազդարարման այլ տեսակներով ազդարարելու դեպքում:

24) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 24.** Ներքին ազդարարմանն ուղղված՝ թե՛ գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս **«Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողությամբ** առաջարկվող լուծումները չեն բավարարում միջազգային ստանդարտներին, մասնավորապես՝ ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված **«Ներքին ազդարարման» արդյունավետության թեստին:** Այսպես.

Համաձայն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 2.1. հենանիշի օրենքով պետք է նախատեսված լինեն և գործնականում կիրառվեն պետական հատվածի մարմիններում և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում (state-owned enterprises) ներքին ազդարարման ընթացակարգեր (channels), որոնց առնչությամբ մոնիթորինգային ուղեցույցը սահմանում է *«օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու պահանջ»:* Բացի այդ, «ազդարարման ընթացակարգեր (channels)» եզրույթը մեկնաբանում է հետևյալ կերպ՝ օրենքով նախատեսված է, որ առնվազն պետական հատվածի մարմինները և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները պարտավոր են ընթացակարգեր սահմանել իրենց աշխատողների համար՝ ներկայացնելու կոռուպցիոն հակաօրինական արարքների վերաբերյալ ազդարարումներ պետական հատվածի մարմիններում և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում նման ազդարարումների ստացման և ընթացք տալու համար պատասխանատու անկողնակալ անձին կամ ստորաբաժանմանը:

Մինչդեռ, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը նախատեսում է ներքին ազդարարման հետևյալ ընթացակարգը՝ ազդարարի կողմից հաղորդման ներկայացում իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին: ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշմամբ սահմանվել է պետական հատվածի յուրաքանչյուր մարմնում և կազմակերպությունում ազդարարման հաղորդումների հաշվառման և ձևակերպման համար պատասխանատու անձանց նշանակելու և վերջիններիս մասին աշխատողներին տեղեկացնելու պահանջ: Այնուամենայնիվ, պատասխանատու անձանց նշանակումը նույնը չէ, ինչ ազդարարման ընթացակարգերի (channels), օրինակ՝ հատուկ այդ նպատակով ստեղծված հեռախոսագծի,

Էլեկտրոնային փոստի կամ վեբ ձևի (web-form)՝ ներքին ազդարարումներ ներկայացնելու համար: Բացի այդ, կառավարության վերոնշյալ որոշումը սահմանում է ազդարարման հաղորդումների հաշվառման և ձևակերպման պահանջ, երբ դրանք ստացվում են ազդարարման հարցերով պատասխանատու անձանց կողմից, սակայն բացակայում են կարգավորումներն այն մասին, թե ինչ է տեղի ունենում, եթե ազդարարումը ներկայացվում է անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի: Վերոգրյալի արդյունքում պարզ է դառնում, որ ազդարարման օրենսդրական կարգավորումները նախատեսում են ներքին ազդարարման հնարավորություն, սակայն առկա չէ իրավասու մարմինների համար ներքին ընթացակարգեր (channel)-ներ սահմանելու՝ հստակ և միանշանակորեն ամրագրված օրենսդրական պահանջ:

Բացի այդ, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «իրավասու մարմին» եզրույթը տարածվում է հետևյալ սուբյեկտային կազմի վրա՝ *«Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմին, պետական և համայնքային կազմակերպություն, հանրային նշանակության կազմակերպություն»:* Մինևույն ժամանակ, օրենքը 6-րդ հոդվածում օգտագործում է *«բացառությամբ մասնավոր ոլորտի կազմակերպությունների, որոնք չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին»* եզրույթը: Վերոգրյալի արդյունքում պարզ է դառնում, որ առկա չէ հստակ և միանշանակորեն ամրագրված օրենսդրական պահանջ առ այն, որ ազդարարման ոլորտի, ներառյալ՝ ներքին ազդարարմանն ուղղված ընթացակարգերի սահմանմանն ուղղված իրավակարգավորումները տարածվում են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վրա:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա Ռազմավարության նախագծում սույն ռազմավարական ուղղության ներքո արձանագրվել է, որ տարբեր տեսակների՝ մասնավորապես ներքին ազդարարման գործնական արդյունավետ կիրառումը ապահովված չէ, ինչպես նաև՝ ազդարարման համակարգի գործարկումից մինչ օրս պետական մարմիններում գրանցվել է ներքին ազդարարման 13 դեպք: Այդ համատեքստում, ծրագրի նախագծի «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության ներքո ներքին ազդարարման կապակցությամբ առաջարկվում է վերանայել ազդարարման համակարգի ներկա մոդելը: Բացի այդ, հատկորոշվել է ազդարարման տարածումը պետական մասնակցություն չունեցող կամ հանրային նշանակության կարգավիճակ չունեցող իրավաբանական անձանց վրա: Այդ համատեքստում, ծրագրի նախագծի վերոնշյալ գործողության ներքո առաջարկվում է մասնավոր կազմակերպությունների հետ կապված հաղորդումների ներկայացման, դրանց ընթացք տալու առանձնահատկությունները: Ինչպես տեսնում ենք, թե՛ ռազմավարության, թե՛ գործողությունների ծրագրի նախագծով հստակ և միանշանակորեն չի նշվում ներքին ազդարարման վերոնշյալ խնդիրների մասին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 24.** Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության շրջանակներում անդրադարձ կատարել վերոնշյալ խնդրին՝ նախատեսելով հետևյալը՝

- Ազդարարման ոլորտի իրավասու մարմինների սուբյեկտային կազմի ընդլայնում/հստակեցում՝ կազմում պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ներառմանն ուղղված հստակ և միանշանակորեն ամրագրված օրենսդրական պահանջի սահմանման նպատակով.
- Իրավասու մարմինների համար ներքին ընթացակարգեր (channel)-ներ սահմանելու՝ հստակ և միանշանակորեն ամրագրված օրենսդրական պահանջի սահմանում:

25) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 25.** Չնայած 07.12.2022 թվականին կատարված՝ մասնավոր ոլորտի առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների վրա ազդարարման հետ կապված հարաբերությունները տարածմանն ուղղված օրենսդրական փոփոխություններին՝ թե՛ գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծի, մասնավորապես՝ «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության շրջանակներում առաջարկվող լուծումները չեն բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված «Մասնավոր ոլորտի ազդարարման» թեստին: Այսպես.

Համաձայն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 1.2. հենանիշի ազդարարման հետ կապված օրենսդրությունը պետք է տարածվի, ի թիվս այլոց, նաև մասնավոր ոլորտի աշխատողների վրա: Մինևույն ժամանակ, մոնիթորինգային ուղեցույցը «ազդարարման հետ կապված օրենսդրություն» եզրույթը սահմանում է որպես *«ցանկացած օրենսդրական դրույթ, որը սահմանում է ազդարարումը, հաղորդումների ներկայացման ընթացակարգերը և ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները»:*

Մինչդեռ, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ *«Ներքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին (բացառությամբ մասնավոր ոլորտի կազմակերպությունների, որոնք չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին) հաղորդում ներկայացնելով»:* Նշյալից հետևում է, որ սույն հոդվածը սահմանափակում է ներքին ազդարարումը միայն պետական հատվածի աշխատողների համար, ինչը մասնավոր հատվածի աշխատողներին զրկում է ներքին ազդարարման եղանակից օգտվելու հնարավորությունից: Սա նշանակում

է, որ ազդարարման պաշտպանության մասին օրենսդրական դրույթները կարող են բավարար չափով չտարածվել մասնավոր հատվածի աշխատողների վրա:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա Ռազմավարության նախագծում որոշակի անդրադարձ կատարվել է մասնավոր ոլորտում ազդարարման արդյունավետ իրականացման հիմնախնդիրներին, մասնավորապես՝ պետության կողմից գործարկված մասնավոր հատվածում խախտումների վերաբերյալ ազդարարումների համակարգի բացակայությանը, իսկ Ռազմավարության գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության շրջանակներում նախատեսվել է մասնավոր կազմակերպությունների հետ կապված հաղորդումների ներկայացման և դրանց ընթացք տալու առանձնահատկությունների հստակեցմանը: Ինչպես տեսնում ենք, թե՛ ռազմավարության, թե՛ գործողությունների ծրագրի նախագծով հստակ և միանշանակորեն չի նշվում ներքին ազդարարման վերոնշյալ խնդրի մասին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 25.** Ելնելով վերոգրյալից և նշյալի համատեքստում՝ առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի նախագծի, մասնավորապես՝ «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության շրջանակներում անդրադարձ կատարել վերոնշյալ խնդրին՝ նախատեսելով հետևյալը՝ ազդարարման օրենսդրության տարածում մասնավոր ոլորտի աշխատողների վրա ամբողջ ծավալով, որ կներառի հաղորդումների ներկայացման ընթացակարգերը և ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, մասնավորապես՝ ներքին ազդարարման եղանակից օգտվելու հնարավորությունը:

26) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 26.** «Ազդարարի» միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված ազդարարումների սակավաթվությունը վկայում է հանրության շրջանում հարթակի և առհասարակ ազդարարման ինստիտուտի նկատմամբ վստահության ցածր մակարդակի մասին: Ազդարարման ինստիտուտի կայացման և ինստիտուտի նկատմամբ հանրության շրջանում վստահության մակարդակի բարձրացման կարևորագույն նախադրյալներից է ազդարարման հարթակների՝ օրենքով սահմանված գաղտնիության երաշխիքների արդյունավետության և գործնական պահպանման նկատմամբ վստահելիության ապահովումը: Մինչդեռ, գտնում ենք, որ թե՛ գործող կառուցակարգերը, թե՛ առաջարկվող փոփոխությունները և թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ «Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը» թիվ 2.22 գործողության շրջանակներում առաջարկվող լուծումները բավարար չեն հանրության լայն շերտերում ազդարարման հարթակի վստահելիության ապահովման համար: Այսպես.

Գործող կարգավորումների համաձայն՝ «Ազդարարի» միասնական էլեկտրոնային հարթակին հասանելիություն ունի միայն ՀՀ գլխավոր դատախազությունը, իսկ հարթակի ծրագրային ապահովումն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից: Այս



կապակցությամբ գտնում ենք, որ նշյալը կարող է բացասաբար ազդել ազդարարման հարթակի վստահելիության վրա, քանի որ մասնավոր ընկերության պարագայում, ի տարբերություն պետական մասնակցությամբ ընկերության, ավելանում է առևտրային շահերով առաջնորդվելու կամ, առնվազն, նման հակման առերևույթ հնարավորության վերաբերյալ հանրային ընկալման ռիսկը, թափանցիկության առավել մեղմ չափանիշներին հետևելու ռիսկը և տեղեկատվության անվտանգության ապահովման ոլորտում առավել մեղմ պահանջներով առաջնորդվելու և առավել սակավ մասնագիտացված ռեսուրսներին տիրապետելու ռիսկը:

Բացի այդ, 07.12.2022 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվեց, որ ՄԻՊ-ն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա և հրապարակում ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի կայքէջում: Ընդ որում, ՄԻՊ-ի՝ հաշվետվությունը և վիճակագրությունը միասնական էլեկտրոնային հարթակում հրապարակելու լիազորությունը ծագում է միասնական էլեկտրոնային հարթակին վերջինիս հասանելիությունն ապահովելու պահից: Նշյալ օրենքի կիրարկման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը դրվեց հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում 26.05.2023 - 10.06.2023թթ. ընկած ժամանակահատվածում, որով նախատեսվում է միասնական էլեկտրոնային հարթակին ՄԻՊ-ի հասանելիության ապահովում՝ համապատասխան վիճակագրություն ներբեռնելու նպատակով:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ պետության՝ հարթակին ամբողջական ծավալով ՄԻՊ-ի հասանելիության ապահովմանն ուղղված քայլերը կարող են բացասաբար ազդել միասնական էլեկտրոնային հարթակի գաղտնիության երաշխիքների արդյունավետության և գործնական պահպանման գնահատականի նկատմամբ հանրության վստահության վրա, քանի որ տվյալ պարագայում աճում է թե՛ տեխնիկական, թե՛ մարդկային գործոնով պայմանավորված տվյալների նկատմամբ չարտոնված մուտքի, տվյալների արտահոսքի, տվյալների պատահական բացահայտումների և տվյալների գաղտնիության պահպանման մասին օրենսդրական պահանջների այլ խախտումների ռիսկը:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա Ռազմավարության նախագծում, որպես ազդարարման համակարգի հիմնախնդիր, կարևորվել է հանրության շրջանում վստահության մակարդակի բարձրացումը՝ ամրագրելով քաղաքացիների վստահության ապահովումը որպես ազդարարման համակարգի վերջնական նպատակը, իսկ Ռազմավարության գործողությունների ծրագրի նախագծի «Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային

հարթակը» թիվ 2.22 գործողության ներքո նախատեսվել է միասնական էլեկտրոնային հարթակի անվտանգության լրացուցիչ երաշխիքների սահմանումը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 26.** Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը» թիվ 2.22 գործողության շրջանակներում անդրադարձ կատարել վերոնշյալ խնդրին՝ նախատեսելով հետևյալը՝

- Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի անվտանգության լրացուցիչ երաշխիքների սահմանման շրջանակներում դիտարկել հարթակի ծրագրային ապահովման իրականացումը մասնավոր ընկերության կողմից «Ekeng» էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին հանձնելը:
- Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին շարունակել ապահովել բացառապես ՀՀ գլխավոր դատախազության հասանելիությունը, կամ, որպես այլընտրանքային տարբերակ, էլեկտրոնային հարթակին ՄԻՊ-ի հասանելիությունը ապահովել սահմանափակ բացառապես վիճակագրության ներբեռնման ծավալով:

27) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 27.** Թե՛ գործող իրավակարգավորումները, թե՛ ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «Կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները (...)» թիվ 2.23 գործողությամբ առաջարկվող լուծումները չեն բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված «Ազդարարման պահին ողջամիտ համոզմունք՝ արարքի սխալ լինելու վերաբերյալ» (“reasonable belief of wrongdoing at the time of reporting”) ստանդարտներին: Այսպես.

Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 1.1. հենանիշը և վերջինիս մոնիթորինգային ուղեցույցը պահանջում են, որ ազդարարների պաշտպանության երաշխավորմանն ուղղված որոշակի ստանդարտներ սահմանված լինեն ազդարարման հետ կապված օրենսդրությամբ՝ օրենքի մակարդակով, այդ թվում՝ անձանց որպես ազդարար որակելու համար բավարար պետք է լինի «ազդարարման պահին ողջամիտ համոզմունք՝ արարքի սխալ լինելու վերաբերյալ» (“reasonable belief of wrongdoing at the time of reporting”) շեմը: Սա նշանակում է, որ անհատների կողմից իրենց աշխատավայրում կոռուպցիոն դեպքի կամ այլ խախտման վերաբերյալ ազդարարելիս դրանց ճիշտ լինելու վերաբերյալ ազդարարելու պահին ողջամիտ համոզմունք ունենալը պետք է լինի բավարար վերջիններիս պաշտպանություն տրամադրելու համար, և չպետք է նախատեսված լինեն ճշմարտության ստուգմանն ուղղված հավելյալ պարտավորություններ ազդարարների համար:

Մինչդեռ, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ

*անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր, նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը»:*

Ինչպես տեսնում ենք, գործող իրավակարգավորման՝ ազդարարի կողմից տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը ստուգելու նպատակով միջոցներ ձեռնարկելու պահանջ սահմանող վերջին տարրը խնդրահարույց է, քանի որ այն գերազանցում է «ազդարարման պահին ողջամիտ համոզմունք՝ արարքի սխալ լինելու վերաբերյալ» շեմը և լրացուցիչ պարտականություն է սահմանում ազդարարի համար, ինչը չպետք է լինի վերջինիս պարտավորությունը: Նման կարգավորումները ոչ միայն չեն խթանում ազդարարումը, այլև՝ հնարավոր է, որ ետ պահեն անձանց ազդարարելուց:

Ինչ վերաբերվում է Ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծով առաջարկվող լուծումներին, ապա Ռազմավարության նախագծում և գործողությունների ծրագրի նախագծի «Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը» թիվ 2.22 գործողության ներքո նախատեսվել է արձանագրվել է, որ ազդարարների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների արդյունավետությունը, այն, որ օրենսդրությամբ նախատեսված չեն նաև ազդարարման հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունվող ակտերին ներկայացվող հիմնական պահանջները, ազդարարման հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունված ակտերի բողոքարկման մեխանիզմները:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 27.** Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Ռազմավարության նախագծի և գործողությունների ծրագրի, մասնավորապես՝ վերջինիս «(...) Կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները» թիվ 2.23 գործողության շրջանակներում անդրադարձ կատարել սույն գործողությանը՝ նախատեսելով ազդարարի կողմից տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը ստուգելու նպատակով միջոցներ ձեռնարկելու պահանջ սահմանող կարգավորման վերանայում:

28) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 28.** Ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության ներքո և գործողությունների ծրագրի նախագծով, մասնավորապես՝ «(...) Դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը» թիվ 2.23 գործողությամբ որպես ոլորտային հիմնախնդիր հատկորոշված է ազդարարման խրախուսմանն ուղղված որևէ կառուցակարգի բացակայությունը: Միևնույն ժամանակ, չի բացահայտվում «խրախուսվում» եզրույթը: **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 28.** Նշյալի շրջանակներում առաջարկում ենք հստակ սահմանել դրամական փոխհատուցման նախատեսում՝ պիլոտային կարգով՝ ՀՀ պետական կամ համայնքային բյուջե հետ վերադարձված գումարի պարագայում՝ կոնկրետ տոկոսային հարաբերակցությամբ:

**Կ. ԼՊՍՏԱԿ 3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

29) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 29.** Սույն ռազմավարական ուղղության ներքո նշված է. *«Բացի այդ, իրականացվել են տեղեկատվական արշավներ Կոռուպցիայի կանխարգելման և հակազդման մարմինների գործունեության վերաբերյալ, իրականացվել են վերապատրաստումներ և սեմինարներ գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով, պետական մարմինների մամուլի քարտուղարների կամ հասարակայնության կապերի մասնագետների և լրագրողների համար կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով, ինչպես նաև տեղեկատվական նյութեր են հրատարակվել Ազդարարման համակարգի և ազդարարման մեխանիզմների, հանրային իրազեկում իրավական ակտերի նախագծերի հրատարակման միասնական կայքի՝ [www.e-draft.am](http://www.e-draft.am) հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին:»* Ընդունելի է այն մոտեցումը, որ Ռազմավարության նախագծի շրջանակներում դրական լույսի ներքո ներկայացվում են կատարված աշխատանքները: Սակայն, ընդունելի չէ, երբ հիմնական խումբ մարտահրավերները, խնդիրները և բացթողումները, որոնցով պայմանավորված այս աշխատանքները չեն տվել ցանկալի և զգալի արդյունք, չեն ներկայացվում և այս ռազմավարական ուղղությունը մշակելիս քաղված դասերի վերլուծությունն առկա չէ, որոնք կլինեին հիմքային ռազմավարական ուղղության և դրանից բխող գործողությունների համար: Այս մասով, ԻՀԱ-ն և գործընկերները իրենց ամենաթարմ դիտարկումները ներկայացրել են ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թթ. գործողությունների ծրագրի 2022 թ.-ին իրականացման ենթակա գործողությունների հասարակական մշտադիտարկման արդյունքների զեկույցի շրջանակներում<sup>12</sup>:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 29.** Վերաշարադրել սույն ռազմավարական ուղղության բովանդակությունը և ներկայացնել հանրային իրազեկման ոլորտում այն հիմնական մարտահրավերները, խնդիրները և բացթողումները, որոնք ի հայտ են եկել չորրորդ Ռազմավարության կատարման և գնահատման ընթացքում, ինչպես նաև մասնագիտացված ՔՀԿ-ների կողմից կատարված մշտադիտարկումների (բացահայտումների) արդյունքում, շեշտադրվելով նաև ազդարարման համակարգի վերաբերյալ հանրության մշակույթը փոխելու կարևորությունն ու այդ մասով Կառավարության հանձնառությունը:

30) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 30.** Սույն ռազմավարական ուղղության ներքո նշված է. *«Ֆինանսական միջոցների բացակայությունը ևս էական ազդեցություն ունի իրազեկման ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացման վրա, քանի որ առանց բավարար ֆինանսական միջոցների առկայության և տեղական ու միջազգային փորձագետներ ներգրավելու հնարավոր չէ կազմակերպել ճշգրիտ և արդյունավետ իրազեկման արշավներ:»* Ֆինանսական միջոցները միայն փորձագետների ներգրավման համար

<sup>12</sup> <https://armla.am/49891.html>

չէ, որ անհրաժեշտ է: Գտնում ենք, որ այս ուղերձը պետք է ճիշտ և թիրախային տեղ հասցնել, և որ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով է, որ ներդրված հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերը թույլ են և չեն տվել զգացի արդյունք:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 30.** Վերախմբագրել սույն ռազմավարական ուղղության բովանդակությունը և ներկայացնել հանրային իրազեկման ոլորտում այն հիմնական մարտահրավերները, խնդիրները և բացթողումները, որոնք ի հայտ են եկել չորրորդ Ռազմավարության կատարման և գնահատման ընթացքում, ինչպես նաև մասնագիտացված ՔՀԿ-ների կողմից կատարված մշտադիտարկումների (բացահայտումների) արդյունքում:

31) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 31.** Գործողությունների ծրագրի նախագծի **3.1 գործողությամբ** նախատեսված է՝ մշակել և ներդնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ նաև ՆՈՒՀ) 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր: Գտնում ենք, որ այս տարիքային խմբի երեխաների համար հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագրերի մշակումը չի կարող արդյունավետ լինել: Այս թիրախային խումբը չի կարող ընկալել նման բարդության թեմաներ և մոդուլներ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 31.** Վերանայել այս գործողությունը և կատարողականի թիրախները, և այս տարիքային խմբի համար մշակել ոչ թե բարդ և արդյունք չապահովող թեմաներ և մոդուլներ, այլ միայն մշակել և ներդնել բարեվարքության և էթիկայի թեմաներով թիրախային կրթական ծրագիր:

32) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 32.** Գործողությունների ծրագրի նախագծի մի շարք գործողությունների Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշների և Ստուգման միջոցների միջև բացակայում է հստակ կապը: Օրինակ՝ **գործողություններ 3.1, 3.2, 3.13, 3.14, 5.2.2, 5.2.3-ով** նախատեսված ստուգիչ միջոցները չեն կարող ապահովել արդյունքների իրական պատկեր: Տե՛ս Դիտարկում 53-ում ներկայացված օրինակը, որը կիրառելի է այստեղ թվարկված գործողությունների դեպքում ևս:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 32.** Վերանայել Գործողությունների ծրագրի նախագծով նախատեսված ստուգման միջոցները և ապահովել հստակ կապ՝ արդյունքների և ստուգման միջոցների միջև: Օրինակ՝ **գործողություն 3.1-ի** ստուգման միջոցներից պետք է լինի՝ գիտելիքների ելակետային գնահատումը՝ կատարված ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություններում; գիտելիքի գնահատման արդյունքներով տարեկան 40% աճի ապահովումը: **Գործողություն 3.2-ի** ստուգման միջոցներից պետք է լինի՝ գիտելիքների ելակետային գնահատումը՝ կատարված ՀՀ ՆՈՒՀ-րի ընդհանուր թվի 50% հաստատություններում; գիտելիքների գնահատման արդյունքներով տարեկան 40% աճի ապահովումը: **Գործողություն 3.3-ի** ստուգման միջոցներից պետք է լինի՝ Գիտելիքների ելակետային գնահատումը, կատարված՝ ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 50%-ում: **Գործողություն 3.12-ի** ստուգման միջոցներից պետք է լինի՝ Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում

վերապատրաստվածների մոտ գրանցած առնվազն 90% իմացությունը, այսինքն՝ գնահատման արդյունքները:

**33) ԴԻՏԱՐԿՈՒՄ 33. Գործողություն 3.3-ով** նախատեսված է *«Հանրակրթության շրջանակում կատարելագործել «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագիրը, վերանայել և ամբողջացնել ուսումնական նյութերը»*: Գործողության վերջնական արդյունքն է՝ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների դաստիարակչական անձնակազմը տիրապետում է հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, ընկալումների և հմտությունների: Միաժամանակ, թերի է ստուգման միջոցը և պարզ չէ, թե ինչպես է ստուգվելու իրական պատկերը և ունեցած արդյունքը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 33.** Վերանայել Գործողություն 3.3-ի ստուգման միջոցը, որը կապահովի գնահատման և արդյունքի իրական պատկերը, և կստեղծի հստակ կապ արդյունքների և ստուգման միջոցների միջև:

**34) ԴԻՏԱՐԿՈՒՄ 34. Գործողություն 3.3-ով** նախատեսված է Հանրակրթության շրջանակում կատարելագործել *«Հասարակագիտություն»* առարկայի առարկայական ծրագիրը, վերանայել և ամբողջացնել ուսումնական նյութերը: 2023 թվականի կատարողական թիրախներից է՝ *«Հակակոռուպցիոն կրթական բաղադրիչի մշակման համար տեխնիկական առաջադրանքը պատրաստվել և հաստատվել է»*: Այս կատարողականի թիրախից պարզ չէ, թե «Մշակված և հաստատված հակակոռուպցիոն բաղադրիչ պարունակող այլ ուսումնական նյութեր»-ը ինչպես են մշակվելու են, արդյո՞ք դրանց համար ևս նախատեսված է լինելու տեխնիկական առաջադրանք, թե դա արվելու է հայեցողական որոշմամբ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 34.** Նախատեսել «Այլ ուսումնական նյութեր»-ի մշակման մրցութային ընթացակարգ՝ տեխնիկական նկարագրի հիման վրա, ինչպես նաև ներկայացնել թե ինչ է հասկացվում «Այլ ուսումնական նյութեր»-ի ներքո, որպեսզի կատարման և գնահատման փուլում գնահատումները կատարվեն ըստ թիրախային արդյունքների:

**35) ԴԻՏԱՐԿՈՒՄ 35. Գործողություն 3.5-ով** նախատեսված է *«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակում ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր, մանկավարժական անձնակազմի համար նախատեսել նշված թեմաներով վերապատրաստումներ»*: Գտնում ենք, որ մեկ գործողության ներքո նախատեսել ուսանողներին և մանկավարժական անձնակազմին մեթոդական սխալ է: Սրանք երկու տարբեր թիրախային խմբեր ներկայացնող սուբյեկտներ են, և նրանց համար կրթական ծրագրեր և վերապատրաստումները պետք է կազմակերպվեն առանձին:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 35.** Ներկայացնել գործողությունները երկու առանձին գործողություններով: Առաջինով որպես թիրախային խումբ նախատեսել նախնական

մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ուսանողներին, երկրորդում՝ մանկավարժական անձնակազմին:

36) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 36. Գործողություն 3.7-ով** նախատեսված է *«Ստեղծել հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակ»*: Գտնում ենք, այս գործողությունը հանրային ռեսուրսների վատնում է և այս հարթակը կարելի է հեշտությամբ տեղադրել Գործողություն 5.1.1-ի ներքո ստեղծվող հարթակով. *«Գործարկել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակ»*:  
**ԱՌՍԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ 36.** Վերանայել Գործողություն 3.7-ը և այն միացնել Գործողություն 5.1.1-ին, այս հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակը դիտարկել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի առանձին բաժին:

37) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 37. Գործողություն 3.12-ի** Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներով նախատեսված է՝ *«Հասարակության լայն շրջանակը հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագրով սահմանված կայուն պարբերականությամբ տեղեկացվում է հակակոռուպցիոն քաղաքականության, (...) թեմաների վերաբերյալ, հետևողականորեն քայլեր են ձեռնարկվում հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ»*: Անհասկանալի է, թե ինչ է նշանակում կայուն հարաբերակցություն և ինչպես է ապահովվելու այս արդյունքը: Սա կարող է առաջացնել հայեցողական մոտեցում, և յուրաքանչյուր դեպքում կարող է մեկնաբանվել տարբեր կերպ, ինչը իր հերթին հնարավորություն չի տա իրապես գնահատել գործողության քանակական և որակական կողմը: Նույն կերպ, հասկանալի չէ «հետևողականորեն քայլեր» ձևակերպումը: Բացակայում է արդյունքային ցուցանիշների և ստուգման միջոցների միջև հստակ կապը:  
**ԱՌՍԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ 37.** Վերանայել Գործողություն 3.12-ի Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշները, ձեռնպահ մնալ այնպիսի ձևակերպումներից, որոնք որոշակիություն չունեն, կարող են ապահովել հայեցողական մոտեցում և ունենալ տարածական մեկնաբանություն, ինչպես նաև ապահովել հստակ կապ արդյունքային ցուցանիշների և ստուգման միջոցների միջև:

38) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 38. Գործողություններ 3.12-ի** շրջանակներում մի քանի անգամ կիրառվում է «հասարակության լայն շերտեր» ձևակերպումը: Միևնույն ժամանակ, անհասկանալի է, թե հասարակության լայն զանգվածը հասարակության քանի տոկոսն է կազմում և ինչպես է այն չափվելու քանակական և որակական գնահատման փուլում:  
**ԱՌՍԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ 38.** Սահմանել հասարակության լայն զանգվածի հաշվարկման համար քանակական ցուցանիշ:

39) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 39. Գործողություններ 3.12-ի** ստուգման միջոցներից՝ *«Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ»*: Որոշակի չէ, թե ինչ միջոցառումների մասին է խոսքը, ում շրջանում պետք է կազմակերպվի, քանի միջոցառում պետք է կազմակերպվի, դրանցից յուրաքանչյուրին քանի հոգի պետք է

մասնակցի, ինչպես է գնահատվելու միջոցառման արդյունավետությունը և այլն: Այս և համանման այլ ցուցանիշների բացակայության արդյունքում գործողության արդյունքները լինելու են շղարշային, և ապահովվելու են զուտ արհեստական գնահատում: Այս գործողության ստուգման միջոցներից պետք է լինի, թե 2023-2026 թվականների ընթացքում քանի հանրային կարծիքի ուսումնասիրություն է լինելու է, և դրա հիման վրա ինչպես է ապահովվելու հասարակության լայն շերտերի իրազեկումը և տեղեկացվածությունը, հստակ նշվի հասարակության լայն շերտերի քանակական ցուցանիշը, ինչ եղանակներով է արվելու և ինչպես է ստուգվելու գործողության արդյունավետությունը, որ արդյունքում չստացվի թե այս կամ այն գերատեսչության կայքէջում նյութ հրապարակելը դիտարկվում է որպես հանրային իրազեկում:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 39.** Վերանայել գործողության կատարողական թիրախները, արդյունքային ցուցանիշները և ստուգիչ միջոցները վերը նշվածի լույսի ներքո:

- 40) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 40.** Մի շարք գործողությունների ստուգման միջոցներում, ինչպես օրինակ՝ **2.20, 2.23, 3.1, 3.2, 3.4, 3.5, 3.6, 3.9, 3.11, 3.12, 3.13, 3.14, 4.1, 4.3,** նախատեսված է՝ *«Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ»:* Չնայած նրան, որ Գործողությունների ծրագրում մեծ տեղ է հատկացված միջոցառումների կազմակերպմանը, դրա հետ մեկտեղ որևէ որոշակիություն առկա չէ: Մասնավորապես, թե ինչ միջոցառումների մասին է խոսքը, ում շրջանում պետք է կազմակերպվի, քանի միջոցառում պետք է կազմակերպվի, դրանցից յուրաքանչյուրին քանի հոգի պետք է մասնակցի, ինչպես է գնահատվելու միջոցառման արդյունավետությունը և այլն: Բացի այդ, հասկանալի չէ, թե մամուլի հաղորդագրությունները ինչպես են հանդիսանում գործողությունների ստուգման միջոց:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 40.** Վերանայել վերը թվարկված գործողությունների ստուգման միջոցները վերը նշվածի լույսի ներքո և նախատեսել իրական ստուգման միջոցներ:

- 41) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 41.** Մի քանի գործողությունների Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներում, ինչպես օրինակ՝ **2.20, 3.13, 3.14, 4.1, 4.3, 4.7,** նախատեսված է՝ *«Կազմակերպված և անցկացված են վերապատրաստման դասընթացներ»:* Չնայած նրան, որ Գործողությունների ծրագրում մեծ տեղ է հատկացված վերապատրաստման դասընթացների կազմակերպմանն ու անցկացմանը, դրա հետ մեկտեղ որևէ որոշակիություն առկա չէ: Մասնավորապես, թե քանի հոգի պետք է մասնակցեն, ինչպես են ընտրվելու թեմաները, ինչու ապահովված չէ հստակ կապ արդյունքային ցուցանիշների և ստուգման միջոցների միջև, ինչու գիտելիքների ստուգման արդյունքները նախատեսված չեն ստուգման միջոցներում, և այլն: Կան գործողություններ, որ վերապատրաստման թիվ առհասարակ նախատեսված չէ (օրինակի՝ գործողություն 5.2.1 ): Այսպիսով, պետք է ոչ միայն գրել վերապատրաստումների իրականացման մասին, այլև մանրամասնորեն ներկայացնել յուրաքանչյուր ոլորտում վերապատրաստված անձանց թիվը և արդյոք այդ սուբյեկտային կազմը կարողանում է կիրառել վերապատրաստված թեմայով իրավական ակտը կամ ուսումնական նյութը վերապատրաստումից հետո, դրանով իսկ



ցույց տալով տվյալ վերապատրաստումների արդյունքը: Այն կարևոր է այնքանով, որ գործողությունը չի կրի ձևական բնույթ և կունենանք չափելի ցուցանիշներ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 41.** Վերանայել վերը թվարկված և Գործողությունների ծրագրով նախատեսված համանման այլ գործողությունների արդյունքային ցուցանիշները և ստուգման միջոցները վերը նշվածի լույսի ներքո, նախատեսել իրական արդյունքային ցուցանիշներ և ստուգման միջոցներ:

- 42) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 42.** Մի քանի գործողությունների Ստուգման միջոցներում, ինչպես օրինակ՝ **5.2.1, 5.2.2, 5.2.3,** նախատեսված է՝ *«ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում հրապարակումներ»:* Գտնում ենք, որ այս ստուգման միջոցը նախ պետք է լինի օժանդակ, և ոչ թե հիմնական միջոց, ինչպես նաև պետք է նշել, որ միջոցը թերի: Մասնավորապես, զուտ հաղորդագրության հրապարակումը չի կարող դիտարկվել որպես ստուգման միջոց: Հարկավոր է նշել հրապարակումների հիմնական ուղերձը, նվազագույն քանակը, դրանց հասանելիության և դիտելիության առնվազն քանակը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 42.** Վերանայել վերը թվարկված գործողությունների ստուգման միջոցները, դրանք դիտարկել որպես օժանդակ՝ նշված գործողությունները լրացնելով այնպիսի ստուգման միջոցներով, որոնք կապահովեն հստակ կապ արդյունքային ցուցանիշների և ստուգման միջոցների միջև, և թույլ կտան կատարել կատարողականի իրական գնահատում:

- 43) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 43.** Գործողություն **5.2.3-ի** հիմնական դիտարկումները ներկայացված են Դիտարկում 53-ի ներքո: Հավելյալ դիտարկումը վերաբերում է Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշների ներքո նշված 3-րդ կետին, ըստ որի՝ *«Վերապատրաստումներին մասնակցել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ ՔՀԿ-ների առնվազն կեսի 2-ական ներկայացուցիչ, ներկայացուցիչներ»:* Գտնում ենք, որ վերապատրաստումներին պետք է մասնակցեն Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ բոլորը ՔՀԿ-ները՝ առանց խտրականության: Հակառակ պարագայում, անհասկանալի է, թե ինչպես և ինչ չափանիշներին հիման վրա է կատարվելու այդ ընտրությունը:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 43.** Վերանայել վերը թվարկված գործողությունը Դիտարկում 53-ի ներքո նշված դիտարկումների և առաջարկությունների ինչպես նաև վերոգրյալի հիման վրա:

- 44) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 44.** Հետբուհական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն, այդ թվում՝ բարեվարքության թեմաներով գիտական աշխատանքների թիվը ցածր է, որը հիմնականում պայմանավորված է բուհերում այդ թեմաների վերաբերյալ պատշաճ ուշադրության բացակայությամբ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 44.** Բուհերի հետ համագործակցությամբ հետբուհական ուսումնական հաստատությունների տարբեր ֆակուլտետներում մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերի պաշտպանության ենթակա գիտական աշխատանքների հաստատված թեմաներում ներառել հակակոռուպցիոն, այդ թվում՝ բարեվարքության թեմաներ:

**D. ՆՊԱՏԱԿ 4. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ**

**ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

45) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 45.** Ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և Գործողությունների ծրագրի նախագծի «Կատարելագործել ԿԿՀ-ի գործիքակազմը գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում» թիվ 4.6. գործողության կապակցությամբ գտնում ենք, որ վերջինիս անվանումը չի արտահայտում սույն գործողության էությունը, այն է՝ կոռուպցիայի դեմ պայքարը մասնավոր ոլորտում:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 45.** Ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և Գործողությունների ծրագրի նախագծի «Կատարելագործել ԿԿՀ-ի գործիքակազմը գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում» թիվ 4.6. գործողությունը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Կատարելագործել ԿԿՀ-ի գործիքակազմը մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում»:

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

46) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 46.** Ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և Գործողությունների ծրագրի նախագծի «Կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բախման և բարեվարքության կառուցակարգերը» թիվ 4.12 գործողության «Կատարվել է առկա իրավիճակի և գործող օրենսդրության վերաբերյալ ուսումնասիրություն՝ ուղղված պետական բարձրաստիճան պաշտոնյաների ուղղակի և անուղղակի մասնակցությունը պետական գնումների գործընթացներում բացառելուն, շահերի բախման կառուցակարգերը կատարելագործելուն» կատարողականի թիրախի կապակցությամբ գտնում ենք, որ նման կառուցակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց, այլև՝ բոլոր հանրային ծառայողներին, ինչպես նաև՝ վերջիններիս փոխկապակցված անձանց:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 46.** Ռազմավարության նախագծի սույն ռազմավարական ուղղության և Գործողությունների ծրագրի նախագծի «Կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բախման և բարեվարքության կառուցակարգերը» թիվ 4.12 գործողության շրջանակներում նախատեսել՝

- Գնումների ոլորտում շահերի բախման կանխարգելմանն ուղղված ավելի խիստ կարգավորումների նախատեսում, որոնցով կսահմանափակվի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամ հանդիսացող փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային

կազմակերպությունների մասնակցությունը այն պատվիրատուների կողմից կազմակերպվող գնումներին, որտեղ վերջինս պաշտոնավարում է կամ համակարգում է այդ ոլորտի գործունեությունը:

- Պետական գնումների ոլորտում շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող հայտարարատու անձանց ցանկի ընդլայնում, որը կներառի այն պաշտոնատար անձանց, որոնք հանդիսանում են գնումների գնահատող հանձնաժողովի անդամ կամ այլ եղանակով մասնակցում են գնումների ոլորտին առնչվող որոշումների կայացման գործընթացին:
- Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցների համակարգի վերանայում պետական գնումներում կոռուպցիայի և շահերի բախման կանխարգելման լույսի ներքո, օրինակ՝ պետական գնումներին մասնակցությունից զրկելու պահանջի նախատեսում:
- Գնումների մասնակիցների կողմից ներկայացված շահերի բախման բացակայության մասին հայտարարության և վերջիններիս իրական սեփականատերերի մասին տեղեկությունների ստուգման արդյունավետ մեխանիզմների նախատեսում, օրինակ՝ ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների էլեկտրոնային գրանցամատյանի (ARMEPS) և ԿԿՀ-ի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի փոխկապակցում, որի միջոցով էլեկտրոնային գնումների տվյալները կփոխանցվեն ԿԿՀ-ին՝ ներառյալ շահերի բախման առկայության կամ բացակայության մասին հայտարարությունները:

47) **ՂԻՏԱՐԿՈՒՄ 47.** Գործողությունների ծրագրի «Կատարելագործել պետական գնումների շրջանակներում մրցակցության ոլորտի իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերը (...)» թիվ 4.13 գործողության կապակցությամբ գտնում ենք, որ «պետական գնումների շրջանակներում» եզրույթի նախատեսումը սույն գործողության ներքո սահմանափակում է վերջինիս գործողության առարկան մենաշնորհների, գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների դեմ պայքարի շրջանակներում:

**ԱՌՍՁԱՐԿՈՒԹՅՈՒՆ 47.** Վերախմբագրել գործողությունների ծրագրի «Կատարելագործել պետական գնումների շրջանակներում մրցակցության ոլորտի իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերը (...)» թիվ 4.13 գործողության անվանումը՝ հանելով «պետական գնումների շրջանակներում» եզրույթը:

48) **ՂԻՏԱՐԿՈՒՄ 48.** Գործողությունների ծրագրի «Արդիականացնել և կատարելագործել գնումների պլանավորման համակարգը» թիվ 4.14 գործողության կապակցությամբ գտնում ենք, որ խնդրահարույց են վերջինիս կատարողականի թիրախները, մասնավորապես՝ «Մշակած և իրավական ակտի տեսքով հաստատված են պատվիրատուների կողմից ձեռք բերվող հիմնական ապրանքների համար միասնական բնութագրերը» թիրախի համար նախատեսված չեն չափելի ցուցիչներ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 48.** Վերանայել գործողությունների ծրագրի «Արդիականացնել և կատարելագործել գնումների պլանավորման համակարգը» թիվ 4.14 գործողության կատարողական թիրախները՝ դրանք դարձնելով առավել հստակ և չափելի:

**Ե. ՆՊԱՏԱԿ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**  
**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

49) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 49.** Սույն ռազմավարական ուղղության ներքո նշված է. *«Չնայած 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում մոնիթորինգի և գնահատման համակարգի բարեփոխումներին...» (էջ 70):* Գտնում ենք, որ Ռազմավարության նախագծում պետք է ներկայացվեն իրականությունը արտացոլող տեղեկություններ: Այս համատեքստում «բարեփոխումներ» եզրույթը կիրառելի չէ, քանի որ իրականում 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակում մոնիթորինգի և գնահատման համակարգի բարեփոխումներ տեղի չեն ունեցել, այլ վերջին մի քանի ամսվա համար քանակական գնահատում կատարելու համար ձևաթուղթ է մշակվել:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 49.** Վերախմբագրել վերը նշված հատվածը և ձեռնպահ մնալ «մոնիթորինգի և գնահատման համակարգի բարեփոխումներ» եզրույթների կիրառումից՝ հանրությանը տրամադրելով օբյեկտիվ իրականությունը արտացոլող տեղեկություններ:

50) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 50.** Սույն ռազմավարական ուղղության ներքո նշված է. *«Ոլորտային հասարակական կազմակերպություններն իրականացնում են հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի այլընտրանքային գնահատում՝ յուրաքանչյուրն իր մեթոդաբանությամբ և գնահատման կատեգորիաներով: Նման պայմաններում այլընտրանքային գնահատումները հնարավոր չի լինում դիտարկել իրավասու մարմնի կողմից իրականացվող գնահատման շրջանակում» (էջ 70):* Գտնում ենք, որ սույն ձևակերպումը օբյեկտիվ չէ, և ԱՆ-ը սրանով փորձում է պարտադրել ՀԿ-ներին՝ տրամադրել ԱՆ-ին իր կողմից ընդունելի համարվող զեկույցներ: Բացի այդ, հասկանալի չէ սույն ձևակերպման հիմնավոր գիտելիքային հենքը<sup>13</sup>, և ողջամիտ դիտորդի մոտ առաջանում են

<sup>13</sup> Տե՛ս օրինակ՝ Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա Լումպուրի սկզբունքները, ըստ որի՝ Հակակոռուպցիոն Ռազմավարության մշակման գործընթացի սկզբունք է՝ *ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔԱՅԻՆ ՀԵՆՔ*, որը նշանակում է, որ Ռազմավարությունների մշակումը, իրականացումը և մոնիթորինգը պետք է հիմնվեն հակակոռուպցիոն քաղաքականությունների և հաստատությունների ոլորտում հուսալի ախտորոշման, կարիքների և ռիսկերի, խոցելի շրջանների և բացթողումների մասին վկայության վրա (*SOUND KNOWLEDGE BASE: Development, implementation and monitoring of strategies should be informed by sound diagnostics, needs and evidence of risk and vulnerability areas and gaps in anti-corruption policies and institutions.*): Հասանելի է այստեղ. հայերեն՝ <https://armla.am/wp-content/uploads/2019/01/Kuala-Lumpur-Statement-Arm-1.pdf>

չփարատված կասկածներ առ այն, որ ԱՆ-ը պատրաստվում է ցուցաբերել խտրական մոտեցում, սահմանափակել և դրանով իսկ միջամտել ՀԿ-ների մասնագիտական և անկախ գործունեությունը, և պարտադրել ՀԿ-ներին մշտադիտարկում կատարել ԱՆ-ի կողմից մշակված մեթոդոլոգիայով: **Ի դեպ, նախորդ՝ չորրորդ Ռազմավարության գնահատման մեթոդոլոգիայի վերաբերյալ դիտարկումներ է ներկայացրել նաև ՏՀԶԿ-ն՝ իր 5-րդ փուլի Մոնիթորինգի զեկույցի դեռևս չհրատարակված նախագծի առաջին և երկրորդ (վերանայված) տարբերակում:** Ընդ որում, դեռ փաստ չէ, որ Ռազմավարության նախագծով նախատեսված հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի կատարելագործումը հանգեցնելու է դրական փոփոխությունների: **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 50.** Վերացնել վերը նշված ձևակերպումը, նախատեսել ՔՀԿ-ների կողմից **այլընտրանքային և հասարակական գնահատումների (մշտադիտարկումների)** արդյունքների օգտագործումը և համադրելիությունը, ձեռնպահ մնալ ՀԿ-ների մասնագիտական գործունեությունը արհեստականորեն սահմանափակելու և գործունեությանը միջամտելու այս արատավոր և անընդունելի պրակտիկայի նախադրյալների ներդրումից:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ**

51) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 51.** Սույն ռազմավարական ուղղության ներքո նշված է. *«Անհրաժեշտ է ուղորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացման միջոցառումներ իրականացնել՝ նախևառաջ դիտարկելով այլընտրանքային գնահատում իրականացնող, ինչպես նաև Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներառված հասարակական կազմակերպություններին:» (էջ 75):* Գտնում ենք, որ այս ձևակերպմամբ ԱՆ-ը պատրաստվում է ցուցաբերել խտրական մոտեցում, սահմանափակել և դրանով իսկ միջամտել ՀԿ-ների մասնագիտական և անկախ գործունեությունը, և պարտադրել ՀԿ-ներին մշտադիտարկում կատարել ԱՆ-ի կողմից մշակված մեթոդոլոգիայով՝ այն համադրելի դիտարկելու համար: Այն ինչ, կան ՔՀԿ-ներ, որոնք իրականացնում են և՛ այլընտրանքային, և՛ հասարակական մշտադիտարկումներ, և որոնք փաստացի ԱՆ-ի հայեցողական որոշմամբ կարող են դուրս մնալ թիրախային խմբի շրջանակներից: Իսկ սա էլ իր հերթին հանգեցնելու է ռազմավարական ուղղության շղարշային կատարմանը, երբ ԱՆ-ը ներդնում է արհեստական գոտիներ թիրախային խմբերի հատկորոշման համար:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 51.** (...) «այլընտրանքային գնահատում»  
բառակապակցությունից հետո լրացնել «հասարակական մշտադիտարկում»  
բառակապակցությունը:

**III. ԲԱԺԻՆ III. 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

52) **ՊԵՏԱԿՈՒՄ 52.** Բաժին III-ի «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը» ենթաբաժին 2-ի ներքո 2-րդ կետով նշված է, որ Ռազմավարության և Գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման գործառույթներն իրականացնում է Ստորաբաժանումը՝ *(...)* *քաղաքացիական հասարակության կողմից կատարված մոնիթորինգի այլընտրանքային զեկույցների և Նախարարությանը հասանելի այլ տեղեկությունների հիման վրա*: Հարկ է նշել, որ կան մասնագիտացված ՀԿ-ներ, որոնք մշակում են նաև հասարակական մշտադիտարկման զեկույցներ, ինչպիսիք ևս պետք է օգտագործվեն ԱՆ-ի կողմից՝ մշտադիտարկման և գնահատման նպատակով: Հակառակ պարագայում, ինչպես արդեն նշել եք վերևում, կստացվի, որ ԱՆ-ը պատրաստվում է ցուցաբերել խտրական մոտեցում, սահմանափակել և դրանով իսկ միջամտել ՀԿ-ների մասնագիտական գործունեությունը, և պարտադրել ՀԿ-ներին մշտադիտարկում կատարել բացառապես նախարարության կողմից մշակված մեթոդաբանությամբ: Ընդ որում, եթե այս արատավոր պրակտիկան զարգացած լիներ նախկինում, ապա կստացվեր, որ ԱՆ-ը չէր դիտարկելու այն ՀԿ-ների զեկույցները, որոնք իրականացրել են ռազմավարության ոչ միայն քանակական, այլև որակական գնահատում, քանի որ ԱՆ-ը հակակոռուպցիոն ռազմավարության որակական գնահատում անելու փորձ և մեթոդաբանական չունեն: Այնինչ, ինչպես նախորդ չորրորդ Ռազմավարության, այնպես էլ քննարկվող նախագծում տեղ են գտել օրինակ՝ ԻՀԱ-ի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից իրականացրած հասարակական մշտադիտարկման արդյունքները, դրանցով որակական գնահատման հիման վրա վերհանված խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկները, այդ թվում վերստուգիչ ցուցանիշների (ստուգիչ միջոցներ) և վերջնարդյունքների գնահատման համակարգի ներդրումը:

Սույն դիտարկումը վերաբերում է նաև նույն ենթաբաժնի 11-րդ կետում նշված հետևյալ ձևակերպմանը. *«Միաժամանակ, համադրելի կդիտարկվեն այն այլընտրանքային գնահատումները, որոնք կիրականացվեն սույն բաժնով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ համաձայն»:*

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 52.** Վերացնել վերը նշված ձևակերպումը, նախատեսել ՔՀԿ-ների կողմից այլընտրանքային և հասարակական գնահատումների արդյունքների օգտագործումը և համադրելիությունը, ձեռնպահ մնալ ՀԿ-ների մասնագիտական գործունեությունը արհեստականորեն սահմանափակելու և գործունեությանը միջամտելու այս արատավոր և անընդունելի պրակտիկայի նախադրյալների ներդրումից:

53) **ՊԵՏԱԿՈՒՄ 53.** Բաժին III-ի «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման

ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը» ենթաբաժին 2-ի ներքո նշված է, որ «(...) արդյունքային մոնիթորինգն իրականացվում է ըստ Ռազմավարությամբ առաջադրված հիմնական խնդիրների լուծմանը միտված արդյունքային մոնիթորինգի ցուցիչների»: Միևնույն ժամանակ, որպես այդպիսին, նշված չէ այն մեթոդաբան, որով իրականացվելու է արդյունքային մոնիթորինգը և գնահատում, իսկ ստուգման միջոցները բավականին թերի են: Օրինակի համար դիտարկենք Գործողությունների ծրագրի **5.2.3 գործողությունը**.

**Գործողություն**

*Զարգացնել Հակակոռուպցիոն ոլորտի ՔՀԿ-ների կարողությունները մասնագիտական վերապատրաստումների եղանակով:*

**Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ**

1. Հավաքագրվել են առնվազն Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ ՔՀԿ-ների կարողությունները:

2. Մշակվել են Հակակոռուպցիոն ոլորտի ՔՀԿ-ների վերապատրաստումների ծրագրի մշակմանը մասնակցել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ ՔՀԿ-ների առնվազն կեսը, իսկ մշակված ծրագիրը քննարկված է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ բոլոր ՔՀԿ-ների հետ: **(Միտքը թերի է Գործողությունների ծրագրում)**

3. Վերապատրաստումներին մասնակցել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ ՔՀԿ-ների առնվազն կեսի 2-ական ներկայացուցիչ, ներկայացուցիչների Վերապատրաստումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 90% իմացություն:

**Ստուգման միջոց**

- 1. Կիսամյակային և ամենամյա մոնիթորինգային հաշվետվություններ
- 2. ՁԼՄ-ներում և սոցիալական ցանցերում հրապարակումներ

Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշների բովանդակությունից հետևում է, որ նախատեսված է հինգ քանակական և մեկ որակական արդյունքային ցուցանիշներ: Այս արդյունքային ցուցանիշների ստուգման միջոցները երկուսն են, որի բովանդակությունից բխում է, որ այս երկու ստուգիչ միջոցները չեն կարող ապահովել քանակական և որակական ցուցանիշների արդյունքային գնահատում և առանձնացված պատկեր: Օրինակ, ենթադրենք մոնիթորինգային հաշվետվությունում արտացոլվում է, որ կարողությունների գնահատումը կատարվել է, բայց ընթերցողին (առավել ևս՝ գնահատում և մոնիթորինգ իրականացնող փորձագետին) հասանելի չեն այնպիսի տվյալներ, թե մոնիթորինգային հաշվետվությունը ինչպես է կազմվել, ինչ մեթոդաբանությամբ, ինչպիսի

առանձնացված արդյունքներն են առկա: Պարզ չէ, նաև թե ինչպես է օգնելու ՋԼՄ-ներում և սոցիալական ցանցերում կատարված հրապարակումները վերապատրաստում անցած ՔՀԿ-ների գիտելիքների ստուգումն իրականացնելու հարցում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քանակական և որակական ստուգման միջոցները բավականին խառն են գրված, և յուրաքանչյուր գործողության և արդյունքային ցուցանիշի մասով ստուգման միավորը առանձին-առանձին չի արտացոլվում, հետևապես դժվար է լինելու գնահատել, թե կոնկրետ որ որակական և քանակական ցուցիչի մասով ինչ ստուգման մեխանիզմ է ներկայացվելու մոնիթորինգային հաշվետվությունում: Ըստ էության, կոնկրետ այս օրինակով ներկայացված գործողության ստուգման միջոցները չեն կարող ապահովել օբյեկտիվ և իրական պատկեր: Ի հակառակ, այս միջոցները ապահովելու են արհեստական գնահատումներ և կատարողական աճ:

Վերը նշված դիտարկումները բխում են նաև ՀՀ վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգը հաստատելու մասին» թիվ N 1508-Լ որոշումից<sup>14</sup>: Մասնավորապես, որոշման Մեթոդական հրահանգը ներկայացնող հավելվածի 13-րդ կետի 2-րդ ենթակետի բ կետի համաձայն՝ *«Պետական կառավարման համակարգի մարմիններում ռազմավարական պլանավորման գործառնությունները կազմակերպվում և իրականացվում են այդ գերատեսչությունների ռազմավարական պլանավորման գործառնությունների իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների կամ անձնակազմի կողմից: Վերջիններս՝ բ. կազմակերպում և իրականացնում են ռազմավարության ազդեցության գնահատումներ: Ռազմավարության ազդեցության գնահատումների (ՌԱԳ) նպատակն է պարզել, թե որքանով են ռազմավարությամբ առաջարկվող կամ սահմանված միջոցառումներն ու ցուցանիշները նպաստում (արդյունավետ) ռազմավարության հիմքում դրված նպատակների իրագործմանը: (...)*»

ՏՉՀԿ-ն՝ իր 5-րդ փուլի Մոնիթորինգի զեկույցի դեռևս չհրապարակված նախագծի երկրորդ (վերանայված) տարբերակում ևս կարևորել է *սահմանված միջոցառումների, արդյունքների և ցուցանիշների միջև հստակ կապ ստեղծելու գործիքները:*

Վերստուգիչ ցուցիչների և որակական ու քանակական ազդեցության գնահատում իրականացնելու վերաբերյալ իրենց ամենաթարմ դիտարկումները ներկայացրել են ԻՀԱ-ն և գործընկերները ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թթ. գործողությունների ծրագրի 2022 թ.-ին իրականացման ենթակա գործողությունների հասարակական մշտադիտարկման արդյունքների զեկույցի շրջանակներում:

Ընդ որում, պետք է նշել, որ համանման թերի ստուգման միջոցներ սահմանված են Գործողությունների ծրագրերի այլ գործողությունների համար նույնպես, ինչպես օրինակ՝ 3.1, 3.2, 3.12, 3.13, 5.2.2 և այլն:

<sup>14</sup> [https://www.arlis.am/Annexes/6/2021\\_N1508lok.hav.pdf](https://www.arlis.am/Annexes/6/2021_N1508lok.hav.pdf)



**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 53.** Վերանայել բաժին III-ի սույն ենթաբաժինը, նախատեսել արդյունքային գնահատում և մոնիթորինգ իրականացնելու համար գործուն մոնիթորինգային և գնահատման մեթոդոլոգիա, որը կապահովի ՀՀ վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ N 1508-Լ որոշմամբ սահմանված մեթոդական ցուցումների պահանջները, կրիի ՏՀԶԿ-ի ստանդարտներից, մասնագիտացված ՔՀԿ-ների կողմից տրված դիտարկումներից ու առաջարկություններից:

54) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 54.** Բաժին III-ի «Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը» ենթաբաժին 2-ի ներքո նշված է, որ «4) *Գործոնային մոնիթորինգի շրջանակում յուրաքանչյուր միջոցառման կատարման գնահատման արդյունքներն արտացոլվում են հետևյալ ցուցանիշներով՝ (1) ամբողջությամբ կատարված է (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 91-100%-ը կատարվել են), (2) կատարված է մեծամասամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 61-90%-ը կատարվել են), (3) կատարված է մասնակի (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 31-60%-ը կատարվել է), (4) կատարված չէ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ կամ կատարվել է նախատեսված աշխատանքների մինչև 30%-ը)»:* Պետք է նշել, որ նախ հասկանալի չէ, թե ինչպես է գնահատվելու կատարողականի քանակական մակարդակը՝ ինչ բանաձևի (հաշվարկի) հիման վրա: Այն Ռազմավարության նախագծով ներկայացված չէ, թեև նախագծով նախատեսված հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի կատարելագործում: Այնուհետև, հիմնավորված չէ այն մտեցումը, թե ինչու է մեծամասամբ կատարված գնահատվում այն գործողությունները, որոնք դիտարկվող ժամանակահատվածի համար կատարված են 61-90%-ով: Գտնում ենք, որ այս միջակայքը բավականին մեծ է, և միջոցառման կեսից մի փոքր ավելի կատարվածը, օրինակ՝ 62%-ը, որևէ պարագայում չի կարող դիտարկվել մեծամասամբ կատարված: Նույն դիտարկումը վերաբերում է նաև մասնակի կատարմանը, անհասկանալի է, թե ինչ մեթոդաբանության վրա է հիմնված այն մտեցումը, որ 32% կատարողական ունեցող գործողությունը գնահատված է մասնակի կատարված: Ինչ մնում է չկատարված գնահատականին, գտնում ենք, որ այստեղ շեմը շատ ցածր է, և այն պետք է բարձրացնել: Հակառակ, պարագայում նման գնահատման համակարգի դեպքում, Ռազմավարության և գործողությունների ծրագրի կատարողականի բարձր ցուցանիշները կրկին անգամ մտահոգություններ են առաջացնելու միջազգային կազմակերպությունների և մասնագիտացված ՔՀԿ-ների շրջանում:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 54.** Վերանայել սույն ենթաբաժնով նախատեսված գործոնային մոնիթորինգի շրջանակում յուրաքանչյուր միջոցառման կատարման գնահատման արդյունքների ցուցանիշները ըստ հետևյալի. (1) ամբողջությամբ կատարված է (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 91-100%-ը կատարվել են), (2) կատարված է մեծամասամբ

(դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 71-90%-ը կատարվել են, գործողությունների 2/3-ից մի փոքր ավելի), (3) կատարված է մասնակի (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների 51-70%-ը կատարվել է, գործողությունների պարզ մեծամասնությունը), (4) կատարված չէ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ կամ կատարվել է նախատեսված աշխատանքների մինչև 50%-ը):

55) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 55.** Բաժին III-ի «2. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը, գնահատման մեթոդաբանությունը» ենթաբաժին 2-ի 14-րդ կետի ներքո նշված է, որ *«Եզրափակիչ մոնիթորինգի և գնահատման զեկույցը մշակվում է սույն գլխով սահմանված կարգով՝ միաժամանակ հաշվի առնելով հաշվետու տարիների ընթացքում մոնիթորինգի և գնահատման զեկույցներով արձանագրված միջանկյալ արդյունքները, միջազգային կազմակերպությունների կողմից գնահատման զեկույցները և առաջարկությունները, իրականացված հարցումների արդյունքները, միջազգային հետազոտությունները և վարկանիշային ցուցիչները:»* Գտնում ենք, որ ԱՆ-ը չպետք է շրջանցի մասնագիտացված ՔՀԿ-ների կողմից ինչպես այլընտրանքային, այնպես էլ հասարակական գնահատումների և մոնիթորինգային զեկույցները, և դրանց արդյունքները նույնպես պետք է հիմք հաշվի առնվեն եզրափակիչ մոնիթորինգի և գնահատման զեկույցները պատրաստելիս:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 55.** Վերաշարադրել սույն ենթաբաժնի 14-րդ կետը և «միջազգային կազմակերպությունների կողմից գնահատման զեկույցները և առաջարկությունները» բառակապակցությունից հետո լրացնել «, մասնագիտացված ՔՀԿ-ների կողմից գնահատման և մոնիթորինգի զեկույցները և առաջարկությունները,» բառակապակցությամբ:

## II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

56) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 56.** Ռազմավարության նախագծի ընդհանուր ծավալը կազմում է 81 էջ: Գտնում ենք, որ Նախագիծը անհարկի ծանրաբեռնված է, և այն պետք է նվազեցվի առնվազն կիսով չափ և պարունակի բացառապես էական նշանակություն ունեցող տեղեկություններ, չպարունակի չորրորդ ռազմավարության կատարողականի եզրափակիչ հաշվետվությամբ հանրությանը արդեն իսկ ներկայացրած տեղեկությունները, տարբեր ազգային և միջազգային մարմինների կողմից կատարված աշխատանքների ամփոփում կամ ուղեցույցների ու դրանց բովանդակության մեջբերում (տե՛ս օրինակ՝ էջեր 69, 70): Անհասկանալի է թե ինչու է շուրջ երկու էջ նվիրված ԱՆ-ի Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության գործառնություններին, որը կրկնվում է Ռազմավարության նախագծի այլ մասերում (տե՛ս օրինակ՝ էջեր 72, 76), երբ կարելի է հարցը լուծել հղմամբ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 56.** Կրճատել Ռազմավարության նախագծի ծավալը, վերախմբագրել և դուրս թողել չորրորդ Ռազմավարության կատարողականի եզրափակիչ հաշվետվությամբ հանրությանը արդեն իսկ ներկայացրած տեղեկությունները, տարբեր ազգային և միջազգային մարմինների կողմից կատարված աշխատանքների ամփոփումները կամ ուղեցույցների ու դրանց բովանդակության մեջբերումները: Իսկ ԱՆ-ի Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության գործառնությունները ներկայացնելու փոխարեն ուղղակի դնել առցանց հղում:

57) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 57.** Բաժին 2-րդի «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ» Նպատակ 3-ի «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ» ռազմավարական ուղղության 48-րդ էջում արված է հղում 32-ը: Հղմամբ նշված է. *«Տե՛ս ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների գործողությունների ծրագրի, 2021 թվականին իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների: Երևան, 2022, Հայաստանի ՔՀԿ-ների Հակակոռուպցիոն Կոալիցիա:»* Ձեկույցի անվանումը նշված է ոչ ամբողջական, առկա է վրիպակ, իսկ հեղինակների ցանկը թերի է:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 57.** Ապահովել պատշաճ հղում, նշել զեկույցի բոլոր հեղինակներին, մասնավորապես՝ զեկույցը մշակվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից համատեղ: Ուղղել զեկույցի վերնագրում առկա է վրիպակը: Ուղղել 69-րդ հղմամբ ԻՀԱ-ի անվանման մեջ առկա վրիպակը: Ներկայացնել զեկույցի ճշգրիտ և ամբողջական անվանումը, այն է՝ *«ՀՀ 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության 2021 թվականի իրականացման ենթակա գործողությունների մշտադիտարկման արդյունքների զեկույց»:*

58) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 58.** Ինչպես Ռազմավարության նախագծում, այնպես էլ Գործողությունների ծրագրի նախագծում առկա են մի շարք տեխնիկական, քերականական, մտքի շարադրանքի վրիպակներ և թերի շարադրանքներ (տե՛ս վերջինիս օրինակը՝ էջ 74, նախավերջին պարբերություն):

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 58.** Վերանայել Ռազմավարության Գործողությունների ծրագրի նախագծերը նշված վրիպակները վերացնելու նպատակով:

59) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 59.** Ռազմավարության նախագծում կան հղումներ, որոնք չեն գործում (տե՛ս օրինակ՝ հղում 69): Անհասկանալի է նաև հղումներ անելու տրամաբանությունը և մոտեցումը: Մասնավորապես՝ մի մասի դեպքում Ռազմավարության նախագծում նշվում են աղբյուրների անվանումները, մյուսների դեպքում՝ միայն առցանց հղումները: Ընդ որում, երկու դեպքում էլ հասանելի են առցանց հղումներ և փաստաթղթերի անվանումներ:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 59.** Վերանայել Ռազմավարության նախագիծը և ապահովել պատշաճ ու գործող հղումներ:

60) **ԴԻՏԱՐԿՈՒՄ 60.** «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության որոշման նախագծի 1-ին մասի 3) կետում նշված է՝ «1. Հաստատել. 1) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ համաձայն N 1 հավելվածի. 2) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի. 3) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի ֆինանսական գնահատականը՝ համաձայն հավելված 3-ի.»: 2023 թվականի հուլիսի 13-ին ՀՀ ԱՆ-ի կողմից իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am) հրապարակված փաթեթում հանրային քննարկման է ներկայացվել վերը նշված որոշման նախագծի միայն Հավելվածներ 1-ը և 2-ը: Հավելված 3-ը հրապարակված չէ, և հանրությունը, առավել ևս մասնագիտացված հանրությո՞ւր, փաստացի զրկված է Հավելված 3-ին ծանոթանալու և կարծիքներ ներկայացնելու հնարավորությունից: Ավելին, որպես այդպիսին, չորրորդ Ռազմավարության ֆինանսական գնահատման կատարողականի վերաբերյալ հանրությանը չի ներկայացվել գնահատման հաշվետվություն ԱՆ-ի կողմից: Այս պարագայում քաղաքացիական հասարակությունն ինչպես առաջարկվող նախագծերի վերաբերյալ կարծիք հայտնելիս, այնպես էլ՝ իր այլընտրանքային մշտադիտարկման ժամանակ չի կարող գնահատել ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման ֆինանսական արդյունքները:

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 60.** Հրապարակել չորրորդ Ռազմավարության ֆինանսական գնահատման վերաբերյալ հաշվետվությունը: Հրապարակել և հանրային քննարկման դնել հինգերորդ Ռազմավարության Հավելված 3-ը՝ Ֆինանսական գնահատումը, դրա համար սահմանելով օրենքով սահմանված ժամկետներ: Բացի այդ, նկատի ունենալով պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) հայտերի քննարկման և Ռազմավարության նախագծի նախագծման տարբեր ժամկետները, փոփոխել Ռազմավարության նախագծի մշակման ժամկետները՝ այն համապատասխանեցնելով ՄԺԾԾ հայտերի քննարկման օրենսդրական ժամկետներին: